ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՀՈՒՆԻՍԻ 2017Թ.
№ 21 (439)
www.syuniacyerkir.am

² Ù å »ñÁ Ñ»½« ÑÛáõñ ÏÁ · ³ Ý
ù»½ »ñ ³ Ù-»ñ ³ Ù«
´ ³ ñ»õ Ï ï ³ Ý«
Ï Ë áÝ ³ ñÑ í » Ý« »ñ ³ Ù-»ñ ³ Ù«
¶ áÑ ³ ñ ³ ñóáõÝù« ß ³ Õ
Ïß ³ Õ» Ý »ñ ³ Ù-»ñ ³ Ù«
Ê áõë ï áõ ÷ ³ ë ³ ñ...

¶ àõê ² Ü ² Þà î

Մայիսի 18-ին «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը Մեղրու տարածաշրջան կատարած այցի շրջանակում եղավ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունում, հանդիպեց կոմբինատի տնօրեն Անդրեյ Սինյակովին եւ զրույց ունեցավ նրա հետ: Անդրադարձ եղավ ընկերության ներկա ընթացքի, առաջիկա ծրագրերի, հիմնահարցերի եւ նոր տնօրենի որդեգրած սոցիալական քաղաքականության, ձեռնարկության տնօրենության եւ կոմբինատի արհեստակցական կազմակերպության համագործակցության, այլ օրախնդիր հարցերի:

ԱՆԴՐԵՅ ՍԻՆՅԱԿՈՎ. «Այստեղ ես անհարմարավետության զգացում չեմ ունեցել»

Հարցազրույց «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անդրեյ Սինյակովի հետ

– Պարոն Սինյակով, ի՞նչ գիտեիք Հայաստանի մասին եւ ի՞նչ փոխվեց Ձեր պատկերացումներում, քանի որ ապրել եւ աշխատել եք հեռավոր Յակուտիայում, ինչպե՞ս հարմարվեցիք նոր պայմաններին:

– Լավ տպավորություններ ունեմ այստեղի մասին, խորհրդային տարիներին մենք մի բազմազգ պետության մեջ էինք ապրում, ժողովուրդը միասնական էր, ես ոչ մեծ բնակավայրում եմ ծնվել եւ հասակ առել, որտեղ բնակվում էին Խորհրդային Միության 15 հանրապետության ներկայացուցիչներ, ապրում էին համերաշխ: Ես ընդհանրապես Հայաստանում առաջին անգամ չեմ, մանկական տարիներին եմ առաջին անգամ եղել: Մեր բնակարանն առաջին հարկում էր, երկրորդ հարկում հայկական ընտանիք էր բնակվում: Այն զգացողությունն ունեմ, որ երբեք այստեղից չեմ գնացել: Մեզ մոտ էլ այսպիսի լեռներ կան: Միակ բանը, որ տարբեր

էջ 4

«Ագրոբիոպրոդուկտն» ընդլայնում է արտադրությունը

Արմեն Հարությունյանը, գործարարությամբ զբաղվելով արտերկրում, որոշեց սեփական բիզնեսը ծավալել նաեւ հայրենի քաղաքում: 2013 թվականից գործում է նրա հիմնադրած «Ագրոբիոպրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որ հիմնականում երեք ուղղվածություն ունի՝ թռչնամսի (հավի), համակցված կերերի եւ ալյուրի արտադրություն: Այս ամենում նրան օժանդակում են գործընկերները:

Կյանքի հետաքրքրական ուղի է անցել ընկերության հիմնադիրը: Նովոսիբիրսկի էլեկտրատեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել է Երեւանի «Հայէլեկտրամեքենա» գործարանում, հետո տեղափոխվել Կապան եւ աշխատել «Էլեկտրոն» գործարանում՝ նախ ճարտարագետ-կոնստրուկտոր, հետո էներգամեխանիկական արտադրամասի պետ: Ուսանել է նաեւ արտաքին առեւտրի համամիութենական ակադեմիայում, ավարտելուց հետո աշխատել արտասահմանում՝ Սիրիա, Եմեն, վերադարձել Հայաստան, աշխատել ընդերքի օգտագործման վարչությունում՝ արտաքին կապերի բաժնի պետ, այնուհետեւ կրկին մեկնել Մոսկվա, որտեղ կաթնամթերքի գործարանի տնօրեն է եղել, այնուհետեւ ֆիրմա հիմնադրել, որ մինչեւ հիմա գործում է: Տիրապետում է մի քանի օտար լեզվի՝ անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն:

– Հայրենիք վերադառնալուս մղումն այն էր, որ ցանկացել եմ ինչ-որ բանով օգտակար լինել հայրենակիցներիս: Այս ամենը կարող էի Ռուսաստանում ստեղծել, բայց ներքին համոզմունք ունեի, որ այստեղ դրա կարիքն ավելի շատ է, քան Մոսկվայում: Եկել եմ մարդկանց օգնելու, այլ ոչ թե կապիտալ դիզելու եւ հարստանալու, կարող էի ռեստորան ու խաղատուն բացել, բայց դրանցով տնտեսություն չես զարգացնի, - այսպես է մանրամասնում հայրենիքում հաստատվելու իր մտադրությունը:

Գեղանուշ տանող ճանապարհին ավտոսերվիսի կետ էր բացել, բայց արդյունավետությունը նվազ էր, ուստի դեպի Նորաշենիկ տանող ճանապարհին, մի բաց տարածքում (իր բնորոշումն է), որ երեք հեկտար է, որոշեց թռչնաբուծությամբ (եւ ոչ միայն) զբաղվել: Այժմ արդեն նրա ընկերության արտադրած հավի միսը համարում ունի շուկայում: Իսկ մինչ այդ մեկը մյուսի հետեւից շարք են մտել թռչնանոցները, մորթման եւ սառեցման, համակցված կերերի եւ ալյուրի արտադրամասերը, շուտով նաեւ ինկուբատորը կգործի: Այս վերջինով շատ կարեւոր հարց կլուծվի: Բանն այն է, որ մեկ օրական ճուտը ներկրում են Իրանից, ինչն էականորեն բարձրացնում է թռչնամսի ինքնարժեքը, բացի այդ տեղափոխելու ճանապարհին չեն բացառվում կորուստները: Նաեւ տեղում ճուտ ստանալու դեպքում կփակվի սեփական արտադրության ցիկլը:

Ընկերությունում ամեն ինչ նոր է՝ եւ արտադրական մասնաշենքերը, եւ սարքավորումները: Ասենք նաեւ, որ հոգացել են աշխատողների աշխատանքի եւ կենցաղի պայմանների մասին, մեր այցելության օրը՝ մայիսի 16-ին, շինարարները վերջին սրբագրումներն էին անում վարչական շենքի վրա: Դե հայոց եռագույն դրոշը, որ փակցված է կառույցներից մեկի վրա, շատ հեռվից է ուշադրություն գրա-

էջ 3

Շամբ գյուղի հրապարակը՝ նահատակ զինվոր Մայիս Միրզոյանի անվամբ

Մայիսի 30-ին Դարբաս համայնքի Շամբ գյուղում տեղի ունեցավ զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանի բացման եւ գյուղի հրապարակը հայրենիքի նվիրյալ, ապրիլյան պատերազմում զոհված Մայիս Միրզոյանի անվամբ կոչելու արարողությունը:

Բացման խոսքով հանդես եկավ Դարբաս համայնքի ղեկավար Սաշա Ստեփանյանը՝ մասնավորապես նշելով. *«Արցախյան պատերազմում ոտքի է կանգնել ողջ ազգը, անմասն չմնաց Սյունիքն իր զավակներով, իր արծիվներով: Ոտքի կանգնեց նաեւ մեր համայնքը: Ցավոք, գյուղը զոհեր ունեցավ եւ Արցախյան, եւ ապրիլյան պատերազմներում:*

Խաչքար-հուշակոթողի պուրակի այս ծառերից յուրաքանչյուրը հավերժացնում է մեր զոհերի հիշատակը, ամեն մեկը մի զինվոր է՝ Աստծո հովանու ներքո կանգնած: Սրբության պես պահենք ու պահպանենք նրանց հիշատակը, այս վայրը»:

Զոհված ազատամարտիկի հուշատախտակը բացեց նահատակ Մայիս Միրզոյանի որդին՝ Հայկ Միրզոյանը:

Այնուհետ արարողությունը շարունակվեց խաչքար-հուշակոթողի մոտ:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանն ու համայնքի ղեկավար Սաշա Ստեփանյանը կտրեցին խաչքարի բացման կարմիր ժապավենը, իսկ խաչքարի բացման արարողությունն իրականացրին Արցախյան պատերազմում զոհված Մակիչ Ասրյանի մայրը՝ Ցողիկ Ասրյանը, եւ Մայիս Միրզոյանի որդին՝ Հայկ Միրզոյանը:

Ելույթներ ունեցան Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, «Սիսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը, զոհվածի մայր Ցողիկ Ասրյանը, Արցախյան պատերազմի մասնակից, բուժքույր Նեկտարը:

Աշոտ Մինասյանն իր խոսքում մասնավորապես ասաց. *«Այսօր հիշարժան օր է. մենք խաչքար-հուշակոթող ենք կանգնեցնում*

էջ 3

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Դպրոցների օպտիմալացման նպատակն ուսման որակի բարձրացումն է»

Հարցազրույց Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանի հետ

– Պարո՛ն Ալեքսանյան, համառոտ ներկայացրեք 2016-17 ուստարին մարզի կրթական հաստատություններում:

– Եթե մեկ նախադասությամբ բնութագրեմ, կասեմ, որ 2016-17 ուստարում ունենք նկատելի ձեռքբերումներ, ոգեւորիչ հաջողություններ:

Մարզի 1071 շրջանավարտից 617 հոգի կմասնակցի միասնական քննություններին: Դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլն անցկացվել է 16 առարկայից, որին մասնակցել է 778 աշակերտ, որից 110 աշակերտ իրավունք է ստացել մասնակցել հանրապետական փուլին: Այդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած 157 աշակերտ մարզպետ Վահե Հակոբյանի կողմից պարգեւատրվեց առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի դիպլոմներով: Առիթից օգտվելով՝ պետք է շնորհակալություն հայտնեմ նաեւ կազմակերպիչներին, ովքեր լավագույնս ապահովեցին օլիմպիադայի արդար եւ թափանցիկ անցկացումը, ինչպես նաեւ գիշերակացի, սննդի եւ մի շարք այլ կենցաղային հարցերի լուծումը: Հանրապետական փուլից ունենք 34 մրցանակային տեղ, որից 3-ը՝ առաջին կարգի դիպլոմ՝ Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Եվա Ստեփանյանը՝ մաթեմատիկայից, Սիսիանի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Խաչիկյանը՝ աշխարհագրությունից եւ Շաքեի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ալ-

վարդ Կարապետյանը՝ պատմությունից: Մայիսի 24-ին ԿԳ նախարարի պաշտոնակատար Լեւոն Մկրտչյանը դիպլոմներ հանձնեց 8-12-րդ դասարանների՝ առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի առաջին կարգի դիպլոմակիր աշակերտներին: Նշանակալից էին նաեւ դպրոցականների համար Երեւանի պետական համալսարանի կազմակերպած համալսարանական օլիմպիադաների ընթացքում գրանցած հաջողությունները: Սրան նույնպես աշակերտները մասնակցեցին ոգեւորությամբ, քանի որ լավագույն արդյունքներ գրանցելու դեպքում մայր բուհ ընդունվելու լրացուցիչ հնարավորություն են ստանում: Ուրախությամբ պիտի արձանագրեմ, որ օլիմպիադաներին մեր աշակերտներն ամենայն պատասխանատվությամբ են վերաբերվում՝ առանց զանազան խոտոր ճանապարհների դիմելու եւ, կարելի է ասել, մեկը մյուսին «վերահսկելով»:

Մարզում այս ուստարում ունենք մեդալի 39 թեկնածու:

– Ինչպիսի՞ն էին այս ուստարում մարզի դպրոցներում անցկացված տեսչական ստուգումների արդյունքները:

– Մարզի 23 հանրակրթական դպրոցում 2016թ. հոկտեմբեր ամսին անցկացվեցին տեսչական ստուգումներ, որոնց արդյունքները նույնպես համարում եմ ուստարվա մեր հաջողություններից մեկը: Իրականում բավականին գոհացուցիչ արդյունքներ ցուցաբերեցին մեր դպրոցները՝ հաստատելով այն ճշմարտությունը, որ կրթական գործը բավականին լավ է կազմակերպվում մեր հաստատություններում: Որոշակի բացթողումներ կային իրավական դաշտում, որոնք ստուգումներից հետո շտկվեցին: Նշեմ, որ արդեն շատ դպրոցներում առկա ուսուցչի օգնականի հաստիքը բավականին աջակցում է մանկավարժական աշխատանքի կազմակերպման գործին:

– Հանրապետությունում քննարկվող ամենաակտուալ հարցերից մեկն էլ դպրոցների օպտիմալացման ծրագիրն է: Արդյո՞ք Սյունիքի մարզի որեւէ դպրոցի սպասվում է օպտիմալացում:

– ՀՀ կառավարության ս.թ. մայիսի 11-ի նիստում վարչապետ Կարեն Կարապետյանը հանձնարարականներ տվեց ԿԳ նախարարի պաշտոնակատար Լեւոն Մկրտչյանին՝ հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական կրթական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացման եւ աշխատանքների կազմակերպման օպտիմալացման վերաբերյալ: Նախարարությունն այժմ մշակում է դպրոցների համալիր զարգացման ծրագիր, որի համատեքստում դիտարկվում են քաղաքային դպրոցների վերախմբավորման վերաբերյալ առաջարկություններ՝ հաշվի առնելով ուսուցիչների ծանրաբեռնվածությունը եւ դպրոցների գերբեռնված ու թերբեռնված աշխատանքը: Միավորման շնորհիվ դպրոցն ավելի լիարժեք կաշխատի եւ կկատարի իր ամբողջական ֆունկցիան՝ կրթության որակի ապահովման տեսանկյունից: Սա չի ենթադրում մանկավարժների կրճատում: Իմ կարծիքով՝ նույնիսկ երկու մանկավարժական կոլեկտիվի սինթեզի միջոցով ավելի ուժեղ թիմ կունենանք: Ինչպես ասացի, այս փոփոխությունը վերաբերում է միայն քաղաքային դպրոցներին, բայց ԿԳ նախարարություն ներկայացրած մեր առաջարկության մեջ, խորհրդակցելով մարզպետի հետ, նշել ենք այն բոլոր օբյեկտիվ պատճառները, որ առայժմ Սյունիքի մար-

էջ 7

Կապանի լեռնահարստացման կոմբինատը վերազինվում է

Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնտեսական առողջացման շրջանակներում շարունակվում են կոմբինատի արտադրական ներուժի լիարժեք օգտագործման եւ փաստացի արտադրողականությունը նախագծային ցուցանիշներին հասցնելու ուղղությամբ աշխատանքները:

Առաջնահերթ իրականացվում է Շահումյանի ստորգետնյա հանքի տեխնիկական վերազինում: Պոլիմետալի կողմից ձեռք բերվելուց հետո Շահումյանի հանքի տեխնիկական պարկը համալրվել է Atlas Copco, Sandvik, Komatsu, Normet ընկերությունների արտադրության հորատման հաստոցներով, բարձիչ-տեղափոխող մեքենաներով, ստորգետնյա ինքնաթափերով, մղանով, մկրատաձեւ վերահանիչներով: Ընդհանուր թվով հանքի տեխնիկական պարկն արդեն համալրել կամ հին տեխնիկային փոխարինել է 16 միավոր տեխնիկա, եւս շուրջ 10 միավոր տեխնիկա մատակարարման գործընթացի տարբեր փուլերում է եւ կոմբինատում կլինի առաջիկա շաբաթներին:

Ընկերությունը զուգահեռ իրականացնում է անձնակազմի վերապատրաստում տեխնիկայի այնպիսի միավորների պատշաճ շահագործման համար, որոնց հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետներ կոմբինատում չկան՝ այդ գործընթացում ներգրավելով արտադրող ընկերությունների ներկայացուցիչների:

Տեխնիկական պարկի հզորացման եւ արդիականացման շնորհիվ զգալիորեն բարձրացել են հանքի սարքավորանքի տեխնիկական պատրաստականության եւ օգտագործման գործակիցները, եւ ավելացել է հանքի արտադրողականությունը:

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ հասարակայնության հետ կապերի եւ սոցիալական քաղաքականության բաժին

ՎԱՉԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ. «Ես չեմ կարծում, որ մի քանի կոպեկ խնայելու համար արժե գնալ համայնքների խոշորացման, լավ մտածված չէ...»

Համայնքների խոշորացման ռեֆորմը, կարծում եմ, լուրջ մտածված չէ, մենք մի քանի տարի է, ինչ քննարկումներ ենք անցկացնում Հանրային խորհրդում, նախարարների ենք կանչել, միասին քննարկել:

Զարմանալի է, որ դրան կտրականապես դեմ էր Վլադիմիր Մովսիսյանը, որը ե՛ւ վարչապետ է եղել, ե՛ւ Կենտկոմի առաջին քարտուղար: Ինքն օրինակ էր բերում, որ չեմ հիշում, որ թվականին, երբ Խորհրդային Միության մեջ էինք, նույն բանը Հայաստանում կատարեցին, եւ մոտավորապես 200 գյուղ Հայաստանում փակվեց: Երբ դրա մասին բանակցում էինք, դեռ Կարեն Կարապետյանը վարչապետ չէր, շատ ավելի շուտ էր, մենք տարբեր առաջարկություններ էինք անում, բայց վերջում եկանք այն համաձայնության, որ երեք շրջանում պիլոտային ծրագիր անեն, մի հատ տեսնեն՝ ինչ է ստացվում, հետո նոր

տարածեն ամբողջ Հայաստանում:

Այդ պիլոտային ծրագիրը փաստորեն արվեց Լոռիում, Տավուշում եւ Սյունիքում, բայց արդյունքները ոչ մեկը չի քննարկել, այսինքն՝ պարզ չէ, թե այդտեղ ինչ արդյունքներ բերեց: Առանց այդ արդյունքները քննարկելու ինչպե՞ս ես տարածում ամբողջ Հայաստանում: Հետո գիտեք, Հայաստանը շատ տարօրինակ տեղ է, այսինքն՝ ամեն տեղում դու պետք է մտածես, չես կարող մի ընդհանուր սկզբունք մտածես, ես կարծում եմ, որ դա նախեւառաջ պիտի լինի ժողովրդի ցանկությամբ, այսինքն՝ դու պետք է գնաս, քարոզես, եթե ժողովուրդը համաձայնեց՝ այդ մի մասում կարելի է անել, եթե ժողովուրդը համաձայն չէ, այն մյուս մասում թող չանի:

> *“ Տարբեր գյուղեր կան, որ իրար հետ միավորել ուղղակի չես կարող: Ես պաշտպանության նախարար էի, գունդ էի ստեղծում, ինձ ասացին՝ չի կարող մի խմբում գորիսեցի ու սիսիանցի լինի, ինչքան էլ դա տարօրինակ է, որովհետեւ տարբեր հատկություններ ունեն, այսինքն՝ իրար կողքի ապրում են, բայց տարբեր հատկություններ ունեն:*

Ես չեմ կարծում, որ մի քանի կոպեկ խնայելու համար արժե գնալ համայնքների խոշորացման, ես կարծում եմ, լավ մտածված չէ, արժեր հետաձգել, փորձել մեկ ուրիշ տեղում անել, տարբեր տեղերում մարդկանց հետ խոսելով՝ անել: Այդ ծրագիրը որ ընդունվեց, մենք Դիլիջան էինք գնացել՝ սահմանամերձ շրջան, ժողովրդի հետ որ խոսում էինք, ժողովուրդը ե՛ւ չէր իմանում, չնայած իրենց մոտ արդեն սկսել էին իրականացնել, ե՛ւ մեծ մասը դեմ էր: Եթե ժողովուրդը դեմ է, ինչո՞ւ ես անում, այդ մարդիկ են չէ՞ ապրելու այդ համակարգում:

Հատված «Ռ-Էվոլյուցիա» հաղորդաշարի մայիսի 28-ի թողարկումից

«Ագրոբիոպրոդուկտն» ընդլայնում է արտադրությունը

էջ 1

վում: Այստեղ գերմանական ժամանակակից սարքավորումներ են տեղադրվել, «Չիլլեր» կոչվող սարքավորումը նույնիսկ Եվրոպայում է հազվադեպ հանդիպում: Այն հավի միսն ավելի հյութեղ ու համեղ է դարձնում. մաքրում ավելորդ կեղտից ու հոտերից: Դրանք մոնտաժել-կարգաբերել են գերմանացի մասնագետները, մարդու միջամտությունը հասցված է նվազագույնի, մանավանդ հավի մորթման եւ լվացման ժամանակ բոլոր գործընթացները կատարում են սարքավորումները: Եվս մի առանձնահատկություն. հավերը բտվում են հատակային պահվածքով եւ ոչ թե վանդակային: Ընկերության հիմնադիրը բացատրում է, որ եթե հավը շարժման մեջ է լինում, նրա միսը ավելի համեղ է լինում, քան վանդակում պահած հավի, տնական հավի մսի որակներ է ստանում: *«Շեշտը դնում ենք որակի վրա, ոչ մի քիմիական բաղադրիչ չկա բտվող հավի կերակրացանկում: Մինչեւ յոթ օրական ճտին վիտամիններ ենք տալիս, հետո դադարեցնում, որպեսզի համը չանցնի ճտի մսին»:*

Ի դեպ, թռչնի կերի մասին: Ցորեն, սոյա եւ եգիպտացորեն, - սրանք են թռչնին տրվող հիմնական կերերը: Ցորենը գնում են մարզի մենատնտեսներից, սոյան եւ եգիպտացորենը ներկրում են: Զրուցակցիս փոխանցմամբ՝ մեզ մոտ սոյա չեն աճեցնում, Երեւանից են ներկրում, վաճառողն իր գինն է թելադրում: Ուստի տեղում փորձնական ցանք են կատարել, եւ դրական արդյունք ստանալու դեպքում իրենք իրենց գլխի ճարը կտեսնեն: Այլ է բանը եգիպտացորենի դեպքում, որն աճեցնելու համար ոռոգովի հողատարածություն է հարկավոր: Բայց այդպիսի վիճակը նեղը չի գցում գործարարին, որը թռչնակերի խնդրի լուծման շատ օպտիմալ ուղի է մտածել եւ իրականություն դարձրել. տեղում համակցված կեր են ստանում:

Թռչնարտադրությունը ռիսկային ոլորտ է, մի օրում տարիների չարչարանքը կարող է ջուրը լցվել: Բոլորիս հիշողության մեջ թարմ է, թե թռչնագրիպը մի քանի տարի առաջ ինչ «ավերածություններ» էր գործում, ինչ վնասներ հասցրեց թռչնարտադրությանը:

– Ճուտն Իրանից ենք ստանում, այնտեղ մայր հավին պատվաստումներ արված պիտի լինեն, որ հիվանդությունը ճտին չփոխանցվի: Այստեղ մի քանի անգամ պատվաստումներ ենք անում՝ տարբեր հիվանդությունների դեմ, մինչեւ օրական ճուտը մսատու հավ դառնա, – մանրամասնում է զոոտեխնիկ Ռազմիկ Ալեքսանյանը, ով երկար տարիներ աշխատել է Կապանի թռչնաֆաբրիկայում:

Խոսք եղավ թռչնի մսի՝ շուկայում մրցակցության մասին. *«Շուկայում անարխիա է,* – ավելի հարմար բառ չի գտնում գործարարը, *– Ռուսաստանից, Պարսկաստանից, այլ տեղերից հավեր են ներկրում, այստեղ փաթեթավորում, իրենց ապրանքանիշով վաճառքի հանում: Մենք չենք կարող գնորդին խաբել, բացի այդ՝ մեր արտադրանքը գովազդի կարիք չունի, ինքն է իր համար ճանապարհ հարթում»:* Նաեւ հավելում է, որ պայմանագրեր ունեն կնքված մարզկենտրոնի դպրոցների, մանկապարտեզների հետ:

– Թռչնարտադրության հետ կապված հույսերն արդարացվե՞լ են, - հարց ենք ուղղում մեր զրուցակցին: *«Դժգոհ չենք, աշխատում ենք ճիշտ կազմակերպել մեր աշխատանքը»,* – լինում է պատասխանը: Հընթացս տեղեկանում ենք, որ ընկերությունը հավի միսը մատակարարում է կիլոգրամը 1370 դրամով, եւ մտածում սեփական կերարտադրությանը զարկ տալով՝ արտադրանքի ինքնարժեքն իջեցնել:

«Ագրոբիոպրոդուկտ» ՍՊ ընկերության գործունեության երրորդ ուղղությունն այլուրի արտադրությունն է: Ցորենը ձեռք են բերում տեղացի արտադրողներից, շուտով կսկսվի հասկավոր մշակաբույսերի բերքահավաքը, ցորենի մթերումն էլ չի ուշանա: Մոտավոր հաշվարկներով՝ Կապանում յոթ տոննա այլուր է իրացնում: Մարզում ալրաղացներ շատ կան, մանավանդ Սիսիանում, Գորիսում, մրցակցությանը դիմանալու խնդիր կա: Ուստի դրան դիմանալու համար մտադրություն ունեն այլուր արտադրել՝ դիետիկ հաց թխելու համար:

– Որպեսզի մեր արտադրած այլուրը մրցունակ լինի, վաճառում ենք մայրաքաղաքային գներով, այսինքն՝ շահավետ է «Ագրոբիոպրոդուկտի» այլուրը գնել, – համոզված է գործարարը:

Շատ կարեւոր է հանգամանքը, որ գործի մարդը սոցիալական շատ կարեւոր խնդիր է լուծել՝ զբաղվածության խնդիրը: Միջին աշխատավարձի մասին հարց չհնչեցրինք, քանզի ընկերությունը շարունակում է ընդլայնել արտադրությունը:

Այժմ ընկերությունում ներգրավված է քառասունից ավելի աշխատող, շինարարության ընթացքում նրանց թիվը հասնում էր յոթանասունի: Ինչպես փոխանցեց հիմնադիրը, առայժմ աշխատում են նախագծային հզորությունների 30 տոկոսի չափով: Եղածով բնավ չեն բավարարվում: Խոսքն արտադրանքի տեսականու ընդլայնման վերաբերյալ է: Նաեւ մտածում են ձուկ բուծելու մասին, անհրաժեշտ նախադրյալները ստեղծել են:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Շամբ գյուղի հրապարակը՝ նահատակ զինվոր Մայիս Միրզոյանի անվամբ

էջ 1

Արցախյան պատերազմում զոհված շամբցիների հիշատակին, գյուղի հրապարակն անվանակոչում ենք «Սիսականի» հրամանատարներից մեկի, համայնքի նախկին ղեկավար Մայիս Միրզոյանի անունով:

Արցախյան պատերազմը չի ավարտվել, քանի դեռ հաշտության պայմանագիր չի կնքվել:

Երիցս փառք այն ժողովրդին, նրա մայրերին, որ նման զավակներ են ծնել, երիցս փառք այն բանակին, որ այսօր ունենք՝ իր հրամանատարներով, քաջ զինվորներով:

Փառք այն համայնքին, որ կարողանում է հավերժացնել իր նահատակ զինվորի, իր մարտիրոսված զավակների հիշատակը:

Ես խոնարհվում եմ իմ զինակից ընկերների, զոհվածների, նրանց ծնող մայրերի եւ ժողովրդի առջեւ:

Մենք երբեք չպետք է տարանջատենք Արցախյան պատերազմն ու ապրիլյան պատերազմը, դրանց արանքում եւ դրանցից հետո ընկած մեր քաջերին:

Ցավով եմ նշում. ապրիլյան պատերազմում Սյունիքը տվեց 13 զոհ, չտարանջատենք նրանց Արցախյան պատերազմի զոհերից», – ասաց հրամանատարը:

Զոհված զինվորի մայր Ցողիկ Ասրյանն իր հուզիչ խոսքում ասաց, որ մեր բոլոր տղաներն էլ հերոսներ են, քանի որ հայրենյաց սուրբ գործի համար են նահատակվել եւ անմահացել: Նաեւ ասաց, որ հարգանքի ու երախտագիտության են արժանի բոլոր նրանք, ովքեր ողջ են վերադարձել պատերազմից:

Նա խաղաղություն մաղթեց հայ ժողովրդին, զինվորներին՝ բարի ծառայություն եւ վերադարձ իրենց ընտանիքներ:

«Թող մեր մայրերն այսուհետ չլացեն, թող նրանք հպարտությամբ իրենց գիրկը բացեն առողջ եւ հաղթանակած որդիների համար»:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանն իր օրհնանքի խոսքում ասաց. *«Խաչքարն այսօր մենք կանգնեցնում ենք ի նշան հաղթության, ի նշան մեր ննջեցյալների, նրանց հոգու փրկության:*

Այսօր խաչքարեր ենք կանգնեցնում նաեւ մեր հայրենիքի սահմաններին, որպեսզի Աստված պահպանի եւ զորեղացնի մեր զինվորներին, որպեսզի հոգեւոր եւ մարմնավոր թշնամին մուտք չգործի մեր տարածքները:

Սա ուրախալի առիթ է, որ հայ ազգը հիշում է իր հերոսին, իր նահատակներին: Մեր երեխաներին այսպիսի միջոցառումներով, խորհուրդներով դաստիարակում ենք հայրենասիրական ոգով:

Փառք Աստծո, որ լույս ծագեց մեր երկրի, մեր ժողովրդի վրա, եւ նա այսօր հիշում է իր հերոսներին՝ Անդրանիկին, Նժդեհին, Գեւորգ Չաուշին, որ ունեցանք անկախ պետականություն եւ այսօր էլ նորօրյա պետականությունը կերտած մարդկանց ենք փառաբանում, մեր զոհված ազատամարտիկներին, մեր զինվորներին:

Թող տա Աստված, որ էլ չունենանք զոհեր եւ ունենանք միայն խաղաղ երկինք, մեր զինվորները ծառայեն խաղաղության թեւերի տակ, կերտեն ու զորացնեն հայոց հայրենիքը եւ հայոց հավատը»:

Հիշատակի միջոցառումն իրենց գեղեցիկ կատարումներով եզրափակեցին գյուղի միջնակարգ դպրոցի գեղարվեստական ինքնագործ խմբերի սաները (ղեկավար՝ Լուսինե Հովհաննիսյան):

Միջոցառումը վարեց Սիսիանի համայնքապետարանի ներկայացուցիչ Նարա Հովհաննիսյանը:

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՆԴՐԵՅ ՍԻՆՅԱԿՈՎ. «Այստեղ ես անհարմարավետության զգացում չեմ ունեցել»

Հարցազրույց «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անդրեյ Սինյակովի հետ

էջ 1

է, այն է, որ այնտեղ ինը ամիս ձմեռ է լինում, այստեղ՝ ինը ամիս ամառ: Ինձ շատ ջերմությամբ ընդունեցին եւ՛ համայնքը, եւ՛ կոմբինատի անձնակազմը, այնպես որ անհարմարավետության զգացում չեմ ունեցել:

– Հանքարդյունաբերության մեջ վերջին մեկ-երկու տարում միջազգային մասշտաբով հիմնախնդիր էր գների ցածր նիշը, որը, կարծեք, մի փոքր կայունացել է: Ինչպե՞ս եք գնահատում գների ներկա վիճակը, արդյո՞ք կարելի է համարել, որ կայունացման ճանապարհ եք դուրս եկել:

– 2015-2016 թվականներին դժվարին իրավիճակ էր ստեղծվել լեռնահանքային արդյունաբերության մեջ՝ կապված համաշխարհային շուկայում գունավոր մետաղների գների անկման հետ: Բայց ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, 2016-ի վերջին եռամսյակում մետաղների գների փոքր-ինչ կայունացում արձանագրվեց, իսկ այս տարվա հունվարին մեկ տոննա պղնձի գինը հասավ վեց հազար դոլարի, հիմա 5600 դոլար է: Չնայած ձեռնարկության բյուջեն կազմվել է այդ ցուցանիշների սահմաններում, բայց այսօր առաջընթացի հնարավորություններ ենք փնտրում. դա նախեւառաջ արտադրության օպտիմալացումն է, ծախսերը նվազագույնի հասցնելն առանց աշխատողների թվաքանակը կրճատելու: «Գեոպրոմայնինգ» ընկերության խումբը եւ մեր կոմբինատի կոլեկտիվն ու ես անձամբ գիտակցում ենք, որ պիտի առաջիկայում արդյունավետ աշխատենք: Ես արդեն որոշակի առաջընթաց եմ նշմարում. մենք երկու միլիոն դոլարի ներդրում ենք կատարել, լեռնարդյունաբերական նոր տեխնիկայի առաջին խմբաքանակն ենք ստացել՝ թրթուրավոր էքսկավատոր, բուլդոզերներ, 55 տոննա բեռնատարողությամբ ինքնաթափերի առաջին խմբաքանակը՝ 5 մեքենա, ստացել ենք հունիսին, հուլիսի սկզբին կստանանք երկրորդ խմբաքանակը: Դա հնարավոր դարձավ ծախսերի օպտիմալացման շնորհիվ, որ ձեռնարկությունում կատարեցինք: Մենք ոչ թե հույս ունենք, այլ համոզված ենք, որ կհասնենք այն արտադրական ցուցանիշներին, որ պլանավորել ենք:

– Այս տարվա փետրվարի 3-ին նշանակվել եք ձեռնարկության տնօրեն, ձեռնարկությանը ծանոթանալու հնարավորություն եք ունեցել: Ինչպե՞ս եք գնահատում կոմբինատի կադրային ներուժը, մասնագետների պատրաստվածությունը:

– Պիտի ասեմ, որ կադրային խնդիր ոչ միայն մեր կոմբինատում, այլ ամենուր կա: Հիշենք՝ նախկինում մի կարգախոս էր շրջանառվում՝ կադրերն են որոշում ամեն ինչ: Կադրերի հարցում որոշակի դժվարություն կա, ես կադրային հարցում պաշտպանում եմ «Գեոպրոմայնինգ» ընկերության քաղաքականությունը. նախեւառաջ նախապատվությունը տալ տեղացի կադրերին: Վերջին երկու տարում կոմբինատի միջոցներից կադրերի պատրաստման նպատակով գումարներ են հատկացվել, որ նույնիսկ պատահիները եւ աղջիկները դպրոցական տարիքից հաղորդակցվեն կոմբինատի տեխնոլոգիական պրոցեսներին: Այդ քաղաքականությունն առաջիկայում եւս պիտի շարունակենք: Հիմնականում կոմբինատը կադրային ներուժ ունի, պարզապես կուզեի, որ նրանց որակավորումն ավելի բարձր լիներ, եթե ձեռնարկության կադրերի վիճակագրությանն ես ծանոթանում, ապա պարզվում է, որ կադրերի 15-16 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, մեծամասամբ աշխատում են 10-15 տարի, նույնիսկ 2015-2016 թվականներին, երբ լեռնահանքային ոլորտում ծանր իրավիճակ ստեղծվեց, ձեռնարկությունում կրճատումներ չեղան, եւ հիմնական շեշտը դնում ենք տեղացի, տարածաշրջանի կադրերի վրա:

– Առաջիկայում սպասվո՞ւմ է ձեռնարկությունում նոր տեխնիկայի եւ տեխնոլոգիայի ներդրում: Ձեզ գոհացնո՞ւմ է կոմբինատի այսօրվա տեխնիկական զինվածությունը, թեպետ զրույցի սկզբում այդ մասին որոշակի խոսեցիք:

– Պիտի ասեմ, որ «Գեոպրոմայնինգ» միջազգային խումբը, սկսած 2008 թվականից, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում մոտ 70 մլն դոլարի ներդրում է կատարել, ինչը հնարավորություն է տվել պահպանել ձեռնարկության աշխարհաքաղաքական նշանակությունը, նաեւ լուծում տալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական հարցերին: Այստեղ չորրորդ ամիսն է, ինչ աշխատում եմ, նույնիսկ այդ կարճ ժամանակահատվածում, համաձայնեցնելով սեփականատեր խմբի հետ, ձեռք ենք բերել որոշակի տեխնիկա եւ սարքավորումներ, ինչը միտված է ձեռնարկության հզորությունների պահպանմանը, որոնք այժմ կան: Արդեն նշեցի, որ 2015-2016 թվականները դժվարին էին մեր ոլորտի համար, ձեռնարկությունում տեխնիկական վերազինում չէր կատարվել՝ կապված գունավոր մետաղների գների անկման հետ, մի քանի սարքավորում շարքից դուրս էր եկել, պահեստամասերի պակաս կար:

> *Մենք այն համոզմանն ենք, որ հստակորեն եւ արագ պիտի արձագանքենք տնտեսական շուկայում կատարվող փոփոխություններին, հասնենք պլանային ցուցանիշների կատարման մակարդակին, մենք սոցիալական պատասխանատվություն ունենք այս տարածաշրջանի նկատմամբ, մարդիկ էլ, տեսնելով, որ կոմբինատը տեխնիկապես վերազինվում է, ոգեւորվում են, փայլ է նկատվում նրանց աչքերում, ինչպես ասում են՝ ձեռքները քոր է գալիս աշխատելու համար:*

– Որո՞նք են կոմբինատի առջեւ ծառացած առաջնահերթ հիմնախնդիրները, որ լինելու են Ձեր տեսադաշտում պաշտոնավարման ընթացքում:

– Նախ՝ շարունակել տեխնիկական վերազինումը, արտադրության պլանը չիջեցնել, պահպանել կոմբինատի, ինչպես նաեւ «Գեոպրոմայնինգի» զարգացման ռազմավարությունը:

Երկրորդ՝ ծախսերի օպտիմալացումը: Ինչպես հայտնի է, վերջին երեք տարում վնասով ենք աշխատում: Մեզ հույժ անհրաժեշտ է օպտիմալացնել ծախսերը, այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ ենք կատարել՝ հաշվի առնելով միջազգային շուկայի կոնյունկտուրան: Եվ ամենակարեւորը՝ այս վերջին տարիներին կոմբինատի լեռնային աշխատանքներում հետընթաց է գրանցվել: Այսօր մենք քննարկում ենք, թե ինչպես նվազեցնել ծախսերը, հասնել նախագծային ցուցանիշներին, որոնք նախանշված են բաց հանքի համար:

– Ագարակը յուրօրինակ քաղաք-ձեռնարկություն է, ստեղծվել է կոմբինատի բազայի վրա, կոմբինատը մեծապես նպաստել է Ագարակի կառուցապատմանը, մեզ հետաքրքրում է, թե նոր տնօրենը սոցիալական ինչ քաղաքականություն է վարելու, սոցիալական ինչ ծրագրեր է իրականացնելու քաղաքում:

– Սոցիալական քաղաքականությունն ավանդաբար միշտ առաջնահերթ է եղել, այն իրականացվել է մինչեւ իմ պաշտոնավարությունը, դա «Գեոպրոմայնինգ» միջազգային խմբի զարգացման ռազմավարությունն է, մենք պայմանավորվածություններ ունենք հանրապետության կառավարության հետ, կոմբինատը մասհանումներ է անում սոցիալական նպատակներով, մեր հովանավորության ներքո են Ագարակի մանկապարտեզը, դպրոցը, հնարավորության սահմաններում նորոգումներ ենք իրականացնում, ավտոտրանսպորտ հատկացնում, լեռնային տեխնիկա տրամադրում տեղական իշխանություններին: Ճիշտ նկատեցիք, որ Ագարակը քաղաք-ձեռնարկություն է, նրանք՝ կոմբինատն ու քաղաքը, ապրում են ձեռք ձեռքի տված, միմյանց հոգսերով: Կասեմ, որ կոմբինատի սոցիալական քաղաքականությունն անհրաժեշտ բարձրության վրա է:

– Այսօրվա դրությամբ որքա՞ն մարդ է աշխատում ձեռնարկությունում, աշխատատեղերի ավելացո՞ւմ, թե՞ նվազում է սպասվում առաջիկայում:

– 940 մարդ, առայժմ՝ 2017 թվականի արտադրական ցուցանիշների հետ կապված, նոր աշխատատեղեր չեն նախատեսվում: Բացատրեմ՝ ինչու: Այս կոլեկտիվով, մարդկանց այս թվաքանակով կարող ենք նախանշված արտադրական ցուցանիշներին հասնել, ավելորդ ծախսեր չենք նախատեսում, ջանում ենք որ օղակում հնարավոր է՝ նվազեցնել ծախսերը, բարձրացնել արտադրողականությունը՝ առանց առկա հաստիքները կրճատելու:

– Կուզեինք իմանալ ձեռնարկության տնօրենության եւ կոմբինատի արհեստակցական կազմակերպության փոխհարաբերության մասին: Խորհրդային տարիներին արհկոմին ավելի լուրջ դերակատարություն էր վերապահված:

– Չգիտեմ, մյուս ձեռնարկություններում ինչպես, մեր կոմբինատում արհեստակցական կազմակերպությանը լուրջ դերակատարություն է վերապահված:

> *Մենք արհկոմի հետ համագործակցում ենք ամենատարբեր հարցերով, դա նախեւառաջ զանազան միջոցառումների անցկացումն է, որ միտված է կոլեկտիվի համախմբմանը, մեր շփումներում մեծ տեղ է գրավում աշխատանքային օրենսգրքին առնչվող հարցերի քննարկումը:*

Գործնականում ես ամեն օր շփվում եմ արհկոմի նախագահի հետ, նախորդ շաբաթվա ընթացքում, ըստ արտադրամասերի, հանդիպել եմ մարդկանց հետ, խորհրդակցություններ անցկացրել, ամեն մի արտադրամասում ներկայացրել ձեռնարկությունում տիրող իրավիճակը, թե ինչ հեռանկարներ կան, ինչ է անհրաժեշտ անել, կատարված գործերին գնահատական տվել: Այս ամենում մեզ արհկոմը շատ է օգնում:

– Բնապահպանական խնդիրները, կարծեք, չեն նվազում նաեւ Ագարակ քաղաքում: Կարճեւան գետն էլ տարիներ ի վեր յուրօրինակ պոչուկատարի է վերածվել:

Ինչպե՞ս եք գնահատում Ագարակում եւ մերձակայքում ստեղծված բնապահպանական վիճակը եւ ի՞նչ ծրագիր ունեք այդ ուղղությամբ:

– Ի դեպ ասեմ, որ Կարճեւան գետի աղտոտումը ոչ մի պարագայում կապված չէ կոմբինատի հետ: Դուք երեւի նկատի ունեք տարբեր բնապահպանական կազմակերպությունների հրապարակումները: Կոմբինատը չի կարող աղտոտել Կարճեւան գետը մի պարզ պատճառով, քանզի կոմբինատի թափուկատարն անցնում է բոլորովին այլ տեղով: Մենք էլ գետից նմուշներ ենք վերցրել, ներկայացրել բնապահպանական տեսչությանը, դա պղտոր ջուր է, որ գալիս է սարերից: Դա դեռ ամենը չէ:

> *Ագարակի կոմբինատը եռամսյակը մեկ մաքրում է Կարճեւան գետի հունը, հեղեղատարները (վերջին անգամ քսան օր առաջ ենք մաքրել): Նույնիսկ ֆիզիկապես հնարավոր չէ, որ կոմբինատի արտանետումները լցվեն այդ գետի հունը:*

Քանիցս այդ մասին ասվել է, գրվել է, բայց երբեմն-երբեմն այստեղ են գալիս բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ գետից պղտոր ջրի նմուշ վերցնում եւ դրանից պատմություն սարքում: Շրջակա միջավայրի պահպանության հարցերը կոմբինատի ղեկավարության տեսադաշտում են: Դեռ ավելին, մենք ծրագիր ունենք նախատեսված մինչեւ 2020 թվականը, որ ներառում է բնապահպանական վիճակի բարելավումը, թեեւ դա օրենսդրությամբ բնավ էլ նախատեսված չէ: Կոմբինատը ֆինանսական միջոցներ է գտնում՝ վերակառուցելու պոչամբարը, որ թափոնաջրերը պարզաջրվեն եւ նորից կոմբինատ մղվեն:

– Դուք աշխատել եք Ռուսաստանի Դաշնության առաջատար հանքարդյունաբերական ձեռնարկություններում, իսկ հիմա Հայաստանում եք՝ Ագարակում: Հետաքրքիր է՝ շա՞տ է տարբերությունը Ռուսաստանի եւ Հայաստանի նմանատիպ ձեռնարկությունների միջեւ՝ տեխնիկական առումով, կադրերի պատրաստվածության, աշխատանքի կազմակերպման, օրենսդրության առումով:

– Մենք, նախեւառաջ, այստեղ աշխատելու ենք եկել, աշխատանքը բավականին հետաքրքիր է, այստեղ չենք եկել շրջագայելու, մարդկանց այդ խմբից չենք: Դժվարություններ կան արդյունաբերության բոլոր բնագավառներում՝ եւ մետալուրգիայի, եւ հանքաքարի արդյունահանման, եւ արտադրանքի իրացման ոլորտներում: Ինչպես տեսաք, 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամը չշրջանցեց ոչ մի ձեռնարկություն, այդ թվում եւ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: Կան ձեռարկություններ, որոնց ֆինանսատնտեսական վիճակը բարվոք է, կան այնպիսիք, որոնք լուրջ դժվարություններ ունեն: Տարբեր ձեռնարկություններում եմ աշխատել. ես կասեմ, որ Խորհրդային Միության օրոք մի տնտեսական համակարգի մեջ էինք գործում: Ռուսաստանի Դաշնությունում եւս լավ օրենքներ են ընդունվել, մանավանդ բնապահպանության հետ կապված շատ կոշտ, «պահանջկոտ» օրենքներ են ընդունվել, կասեի՝ աշխարհի ոչ մի երկրում նման օրենքներ չեն ընդունվել: Հայաստանի Հանրապետությունը եւս հասարակության, բնության, հայրենիքի հանդեպ պարտավորված լինելու վերաբերյալ օրենքներ է ընդունել:

– Դուք ղեկավարում եք հանրապետության հզոր ձեռնարկություններից մեկը, այնուամենայնիվ, ի՞նչ հիմնախնդիրների եք բախվում այստեղ:

– Այստեղ հիմնախնդիրներ չկան, արտադրանքի իրացման շուկա լինի, մետաղական միջազգային բորսայում գները կայուն լինեն՝ ձեռնարկությունն ազատորեն կգործի: Մենք այսօր ձեռնարկության անխափան աշխատանքի ուղիներ ենք փնտրում: Յուրաքանչյուր ձեռնարկությունում կատարյալ ոչինչ չկա, օղակներ կան, որ հստակ պիտի կարգավորես, տեղեր կան, որտեղ պիտի նվազեցնես ծախսերը, մի այլ ճակատում օպտիմալացնես գործընթացները, այն հաշվով, որ գործն առաջ ընթանա նվազագույն ֆինանսական եւ կապիտալ ծախսերի դեպքում: Այստեղ նկատում եմ, որ նախկինում ճիշտ որոշումներ են կայացրել, արտադրական գործընթացներն օպտիմալացման ճիշտ ուղղությամբ են տարել, հարցեր էլ կան, որ մենք ենք շտկում, որ ձեռնարկությունն աշխատի ավելի շահութաբեր, ավելի արդյունավետ, բարձրարտադրողական, դրանով է պայմանավորված տարածաշրջանի բնակչության կենսամակարդակը, եւ կոմբինատինն ամբողջությամբ:

– Ինչպե՞ս եք վերաբերվում հրապարակայնությանը, առհասարակ մամուլի հետ փոխհարաբերություններին:

– Ես շատ բաց մարդ եմ, հետեւում եմ ֆեյսբուքի գրառումներին, անհրաժեշտության դեպքում մեկնաբանություններ եմ գրում, երբեմն մամուլի հաղորդագրություններ եմ պատրաստում: Իմ գործունեության վերջին երկու տարում, մինչեւ այստեղ գալս, Սախայի Հանրապետության (Յակուտիա) արդյունաբերության եւ երկրաբանության նախարարի տեղակալն էի, շատ եմ շփվել լրագրողների հետ, դա իմ կենսադիրքորոշումն է: Չեմ սիրում դեղին մամուլը, չնայած բոլորի հետ էլ շփվել եմ, խոսքը լրագրողների

մասին է, նույնիսկ դեղին մամուլի հետ զիջումների ենք հասել՝ ձգտելով մամուլի դաշտի ընդլայնմանը:

– Եթե գաղտնիք չէ, ի՞նչ հարցերով են ձեզ դիմում մարդիկ:

– Հիմնականում դիմում են սոցիալական օժանդակության հարցերով, դա աշխատավարձի բարձրացումն է, թեպետ ասեմ, որ մեր ձեռնարկությունում աշխատավարձը 30 տոկոսով բարձր է հանրապետության միջին աշխատավարձից: Իհարկե, դրանով չենք բավարարվում, այս տարվա ընթացքում, ինչպես հայտարարել եմ ձեռնարկության մարդկանց հետ հանդիպումներում, վերանայելու ենք աշխատավարձի համակարգը, իհարկե, դա սերտորեն կապված է լինելու արտադրողականության բարձրացման հետ, որից էլ բխելու է աշխատավարձի բարձրացումը: Հենց այնպես մենք աշխատավարձն իրավունք չունենք բարձրացնելու: Աշխատավարձի տրամադրման նոր համակարգ կլինի, երբ ավելի շատ արտադրանք կտանք, ուրեմն եւ պարգեւավճարներ կլինեն:

Մեր տարածաշրջանը կտրված է մայրաքաղաքից, մեզ դիմում են մայրաքաղաքում առողջությունը վերականգնելու խնդրանքով: Թեպետ Մեղրու բժշկական կենտրոնը ես լավն եմ համարում՝ արդիական սարքավորումներով կահավորված: Բայց նեղ մասնագետների պակասը, հավանաբար, մարդկանց ստիպում է բռնելու մայրաքաղաքի ճամփան:

Մարդիկ հետաքրքրվում են, թե երբ վերջապես Մեղրու տարածաշրջանը կգազիֆիկացվի: Անկեղծ ասած՝ զարմացած եմ, որ խորհրդային տարիներին էլ այս ռեգիոնը գազիֆիկացված չէր: Մեր զրույցի ընթացքում արդեն շոշափեցինք բնապահպանության խնդիրը, մարդիկ իրենց բնակարանները տաքացնում են՝ ինչով պատահի, դա էլ, չէ՞, աղտոտում է օդային ավազանը: Բացի դրանից, երբ գազիֆիկացվեն Մեղրին ու Ագարակը, այստեղ ծառեր էլ քիչ կհատվեն:

Այս աշխատասենյակում գտնվողներս ապրել ենք խորհրդային ժամանակներում, հիշում ենք, տնտեսական այլ համակարգի մեջ էինք ապրում, քառորդ դար է, ինչ ապրում ենք տնտեսական այլ մոդելի պայմաններում, բոլոր ձեռնարկությունները գործում են բիզնեսի օրենքներով: Մարդիկ սրան դժվարությամբ են հարմարվում: Այսօր շուկայում մետաղի գները եթե ընկնում են, դա ցավագնորեն է անդրադառնում մեր ձեռնարկության, նրա վարած սոցիալական քաղաքականության վրա:

– Ի դեպ, ազատ ժամանակ ունենո՞ւմ եք եւ ինչո՞վ եք այն լցնում, ինչո՞վ եք զբաղվում եւ ընդհանրապես ի՞նչն է Ձեզ առավել հետաքրքրում մեր երկրում:

– Այսօրվա դրությամբ ազատ ժամանակ չունեմ, որովհետեւ ամեն րոպեն ինձ համար ոսկու արժեք ունի: Եթե լինում է, ընտանիքիս հետ եմ անցկացնում: Այս երեք ամիսներին, ինչ այստեղ եմ, կոմբինատում վերականգնվել են մարզական միջոցառումները, շաբաթը մեկ-երկու անգամ զբաղվում ենք վոլեյբոլով, ցանկացողները՝ բասկետբոլով: Շուտով ֆուտբոլ կխաղանք Ագարակի խաղադաշտում, հնարավորության սահմաններում ֆուտբոլային մրցում կկազմակերպենք կոմբինատի արտադրամասերի միջեւ, մտածում ենք ընկերական հանդիպումներ կազմակերպել Ագարակի գնդի, Մեղրու սահմանապահ ջոկատի հետ: Իսկ ընդհանրապես շատ եմ սիրում որսորդությունը, ձկնորսությունը: Գիտեմ, որ դրանցով զբաղվելու հնարավորություններ կան այստեղ: Ավա՜ղ, մի րոպե ազատ ժամանակ չունեմ:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Ազնավուրի որդին՝ Նիկոլան, մկրտվել է Տաթեւում

«Ավրորա» համաշխարհային մարդասիրական նախաձեռնության շրջանակում Հայաստանում գտնվող աշխարհահռչակ շանսոնյե, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրը մայիսի 31-ին այցելել է Տաթեւի վանական համալիր, հաղորդում է Հայաստանի զարգացման նախաձեռնություններ հիմնադրամը՝ IDeA-ն:

Մաեստրոյին ուղեկցում էին որդին՝ Նիկոլա Ազնավուրը, երգչի ընկերներն ու գործընկերները: Շառլ Ազնավուրի առաջին կանգառը «ՏաԹեւեր» ճոպանուղու Հալիձոր կայանում էր, որտեղ մեծանուն երգչին դիմավորեցին «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի տնօրեն Էդգար Մանուկյանը, ճոպանուղու տնօրեն Վահե Բաղդասարյանը, հիմնադրամի աշխատակիցները: Էդգար Մանուկյանը Շառլ Ազնավուրին եւ հյուրերին ներկայացրել է «ՏաԹեւեր» ճոպանուղու կառուցման պատմությունը, «Տաթեւի վերածնունդ» հիմնադրամի իրականացրած ծրագրերը, որոնք արդեն էականորեն փոխել են կյանքը Տաթեւի տարածաշրջանում:

«Տաթեւատուն» ռեստորանի հարեւանությամբ գտնվող դիտակետից մաեստրոն որդու հետ հիացել է Այունիքի բնությամբ: Ուղեւորության ողջ ընթացքում երգիչը ոչ մի րոպե չբաժանվեց իր ֆոտոխցիկից՝ փորձելով անընդհատ գեղեցիկ կադրեր որսալ: «Տաթեւատան» տարածքում կարճատեւ դադարից հետո Ազնավուրը որդու եւ ընկերների հետ ճոպանուղով ուղեւորվել է Տաթեւի վանական համալիր, որտեղ հյուրերին սպասում էին Տաթեւի վանքի վանահայր տեր Միքայել վարդապետ Գեւորգյանը, տեղի բնակիչները, մի խումբ զբոսաշրջիկներ:

Վանքի Սուրբ Պողոս Պետրոս եկեղեցում կատարվել է Նիկոլա Ազնավուրի մկրտության արարողությունը՝ ձեռամբ վանահայր տեր Միքայել վարդապետ Գեւորգյանի: Արարողությունն ուղեկցվել է Տաթեւի վանական երգչախմբի կատարումներով: «Ես շատ հպարտ եմ, որ որդիս՝ Նիկոլան, որոշեց մկրտվել Հայաստանում: Ծնողներս այնքան երջանիկ կլինեին՝ իմանալով, որ երկու որդիներս՝ Միշան եւ Նիկոլան, մկրտվել են այստեղ՝ Հայաստանում՝ հավատարիմ մնալով իրենց արմատներին», - ասել է Շառլ Ազնավուրը:

«Ես ծնվել եմ Ֆրանսիայում, սովորել Շվեյցարիայում ու Կանադայում, բայց որքան մեծանում եմ, այնքան ուժեղ եմ կապվում հայկական արմատներիս: Զրուցելով հորս, հորաքրոջս հետ, լսելով նրանց պատմությունները, ես վերադարձա ընտանիքիս արմատներին: Սկսել եմ հայերեն սովորել: Այս ամենից հետո զգացի, որ ցանկանում եմ մկրտվել հենց Հայաստանում», - ասել է Նիկոլա Ազնավուրը: Նա խոստովանել է, որ Տաթեւի վանքում մկրտվելն իր կյանքի անմոռանալի պահերից մեկն է:

1 հունիս 2017, civilnet.am

Սիսիանի պատմամշակութային արժեքներն ու բնության շնորհները

Վերջերս ընթերցողի սեղանին դրվեց Հենզել Առաքելյանի «Սիսիանի պատմամշակութային արժեքներն ու բնության շնորհները» պատկերազարդ գիրքը: Տակավին 1986-ին նրա հեղինակությամբ լույս էր ընծայվել «Սիսիան. տեղեկատու ուղեցույց»-ը գունավոր տպագրությամբ, ավելի ուշ հրատարակվել էին «Սիսիան. պատմաաշխարհագրական ակնարկ» (Երեւան, 1996) եւ «Սիսիանի համառոտ հանրագիտարան» (Երեւան, 2002) գրքերը, որոնց հայրենագիտական-ճանաչողական արժեքը դժվար է գերագնահատել: Ինչո՞վ էր պայմանավորված այս գրքի լույս ընծայումը, եթե հրապարակի վրա էին արդեն վերոնշյալները: Հենզել Առաքելյանը «Այունյաց երկրին» փոխանցեց, որ նպատակը Սիսիանի պատմամշակութային արժեքները մի տանիքի տակ հավաքելն էր. *«Դեռեւս «Որոտան» թերթում աշխատելիս, սկսել էի նյութեր ժողովել, դրանց մի մասը տպագրվել է, այդ ամենը տարբեր գրքերում կային մանր, ցրված: Այս գրքում ամբողջական ներկայացված են եւ՛ պատմամշակութային արժեքները, եւ՛ բնական հուշարձանները, եւ՛ բնության շնորհները, կարծում եմ՝ գիրքը Սիսիան այցելած զբոսաշրջիկներին կծառայի որպես տեղեկատու-ուղեցույց»:*



Առանձին վերնագրերի տակ տրված են Սիսական աշխարհի բնակավայրերի պատմությունն ու անվան ծագումնաբանությունը, դրանց հին ու նոր անվանումները, հանգամանորեն շարադրված է Սիսիանի մելիքության պատմությունը: Գրքի նախաբանում նշվում է, որ դեռեւս 1989-1990 թվականներին տարածաշրջանում գոյություն ունեցող բոլոր հուշարձանները հավաքվել եւ անձնագրավորվել են, ըստ որի առավել արժեքավոր հուշարձանների թիվը հասնում է 282-ի: Անդրադառնալով վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում պատմական հուշարձանների նորոգման աշխատանքներին՝ հեղինակը նաեւ նկատում է, որ պատմական հուշարձանների պահպանության եւ նորոգման աշխատանքներին քիչ ուշադրություն է դարձվում: Ընդհանուր առմամբ՝ այսօր Սիսիանի տարածքում ավերված կամ վթարային վիճակում է 62 պատմական հուշարձան:

Նշելով, որ Սիսիանի պատմության, նրա աշխարհագրության, պատմամշակութային արժեքների ուսումնասիրության համար կան բավականին սկզբնաղբյուրներ, Հ.Առաքելյանը հարկ է համարել առանձնացնել առավել արժեքավոր սկզբնաղբյուրները՝ Ստեփանոս Օրբելյան, Ղեւոնդ Ալիշան, Երվանդ Լալայան, Նիկողայոս Ադոնց, Ադո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան): «Սիսիանի հնագիտական հետազոտությունների երախտավորը» վերնագրի տակ պատմում է պատմաբան, բանասեր, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մորուս (Մարգար) Ստեփանի Հասրաթյանի մասին, տեղ է հատկացված Լոր գյուղում կատարած նրա հնագիտական հետազոտությունների արդյունքներին: Հեղինակը հարկ է համարել ներկայացնել արվեստի արդի ճանաչված գործիչներին՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյան, ՀՀ եւ ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ Զաքար Խաչատրյան, ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյան, արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակակիր Փարավոն Միրզոյան, ՀՀ պետական մրցանակակիր, քանդակագործ Գետիկ Բաղդասարյան:



Առանձին վերնագրերի տակ անդրադարձ կա ժայռապատկերներին, Սիսիանի աստղադիտարանին (Զորաքարեր), Ույծի մեգալիթյան բնակատեղիին, Աղիտուի մահարձանին, Սիսիանի տարածաշրջանում հանդիպող վիմագրություններին, Անգեղակոթում գտնվող Վարդան Մամիկոնյանի եւ Վասակ Սյունու գերեզմաններին, Բնունիսի մահարձանին, տարածաշրջանների եկեղեցիներին ու վանքերին, կամուրջներին, Մեծ հայրենականում ընկած մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձաններին, Սյունյաց թեմին, ՀՀ ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղին եւ Սիսիանի պատմության թանգարանին, քարադարանին:

Վերջում տրված է Սիսիանի պատմական հուշարձանների ցանկը՝ ըստ բնակավայրերի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մտքի թռիչք էր, երեւակայության սլացք...

Կարինե Մովսիսյան

Սկսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի տնօրեն

Ինձ թվում է, այստեղ հաճախող երեխաները պրոֆեսիոնալ նկարիչներ են: Այդ տպավորությունը ստացա ցուցահանդեսին ներկայացված նկարները դիտելիս: Ես նկարել չգիտեմ, գուցե սխալվում եմ, բայց ամեն նկար դիտելուց հետո ես ինձ զգում էի ավելի ուժեղ, սրբացած:

Ռուզաննա Շահնազարյան

մանկավարժ

2-րդ դասարանից երեխաները դպրոցում անցնում են կերպարվեստ առարկան: Այսինքն, արվեստի աշխարհում քայլելու համար դպրոցում արվեստի այբուբենն են նրանք սովորում: Իսկ հետո՞: Ինչ է սպասվում այն երեխաներին, ովքեր դեռ ցանկանում են քայլել արվեստի զարմանահրաշ աշխարհում: Ահա այստեղ նրանց օգնության է հասնում գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի կենտրոնը, որը նրանց հնարավորություն է տալիս բացել իրենց թեւերը: Ահա ինչու շնորհակալություն եմ հայտնում կենտրոնի ղեկավար Արամ Մաշուրյանին:

Հրայր Լալայան

ՀՀ զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի ավագ գնդերեց

Գույների մեջ երեւում է երեխաների ներքնաշխարհը, եւ նրանք այդ ներաշխարհից են դիտում-ընկալում իրենց շրջապատող աշխարհը եւ վերարտադրում: Կենտրոնի սաներն ասես իրենց նկարներով մեզ «ստիպում» են սիրել-վայելել կյանքը եւ այս հրաշք մոլորակը պահել խաղաղ:

Անահիտ Մարտիրոսյան

Կրթության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղի տնօրեն

Ցուցահանդեսի նկարները դիտելիս զգում ես, որ երեխաներն իրենց տարիքին համապատասխան են նայում աշխարհին եւ վերարտադրում աշխարհի նախշերը, պատկերները: Նրանց մեջ արդեն նկարիչն է խոսում, նրանք արվեստին մոտիկ մարդ են դառնալու: Դա նշանակում է, որ նրանք միշտ գնահատելու են արվեստը եւ ապագայում նրանք ինչ էլ որ դառնան, կարողանալու են վերլուծել-գնահատել արվեստի ցանկացած աշխատանք: Բացի դրանից, նրանք կդառնան բազմակողմանիորեն զարգացած մարդ, շփվող մարդ, հասարակության համար պիտանի մարդ:

Այս կենտրոնը նաեւ երեխաներին կտրում է փողոցից: Եվ, որ շատ կարեւոր է, երեխաները գիտեն ուր են գնում, ինչի համար: Այնպես որ, մեր քաղաքում գեղագիտական այսպիսի կենտրոն ունենալը մեծ հաջողություն է ամեն առումով:

* * *

Եվ գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի կենտրոնում բացված ցուցահանդեսի այցելուները նկարները դիտելուց հետո ասես իրենց հոգու պարտքն են համարում անպայման խոսք ասել այս օջախի մասին, արտահայտել իրենց տպավորությունները: Իսկ այդ ցուցադրույթը բացվեց երեխաների պաշտպանության միջազգային օրը: Ամեն նկար այստեղ երեխաներից յուրաքանչյուրի յուրօրինակ մտածելակերպի դրսեւորումն է: Առաջինը, որ այստեղ անմիջապես աչքի է զարնվում, պայծառ, վառ գույներն են: Իսկ դա նշանակում է, որ երեխաների մոտ կա հավատ, հույս ու սեր՝ ներկայի, վաղվա օրվա հանդեպ: Կենտրոնի սաների մեջ տեղային մտածելակերպ չկա: Նրանց երեւակայությունը սահման չի ճանաչում, մտքի թռիչք է, երեւակայության սլացք, որ, միահյուվելով իրար, յուրաքանչյուր նկար դարձրել են իրականությունից քաղված, գունեղ, եւ քեզ թվում է, թե որ նկարին էլ մոտենաս, այն լեզու է առնելու, խոսելու է քեզ հետ: Խոսելու է այն մասին, որ օվկիանոսում նավարկության ելած նավը կարող է Գորիսի ժայռերին հասնել, ու թե պետք է, Արցախի տատիկի ու պապիկի առջեւ խոնարհվել, ինչպես խոնարհվում են խորհրդանիշների առջեւ: Իսկ Արցախի տատիկին ու պապիկին փոքրիկ նկարիչը ներկայացրել է որպես ուժի ու հերոսականության, տոկունության, հայրենասիրության խորհրդանիշ:

Անհնարին է կենտրոն հաճախող երեխաներից որեւէ մեկին առանձնացնել ու ասել՝ նա հիասքանչ է նկարում: Դա արդեն մեծագույն մեղք է: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխայի ստեղծագործություն արժանի է մեծագույն գովասանքի ու խրախուսանքի: Եվ հպարտություն ես ապրում, որ քո քաղաքում այսպիսի կենտրոն կա ու կենտրոնն ունի այսպիսի սաներ: Իսկ կենտրոնի ստեղծագործողների աշխատանքները տնօրեն Արամ Մաշուրյանին իրավունք տվեցին ցուցահանդեսը բացել այսպիսի խոսքերով.

- Այսօր ես հպարտ եմ, որ իրավունք ունեմ մեծ սիրով ու պատասխանատվությամբ հայտարարել ցուցահանդեսի բացման մասին: Մեր կենտրոնի սաների մեջ հետաքրքիր միտում կա՝ միշտ ստեղծել գեղեցիկը եւ քայլել արվեստի ֆանտաստիկ աշխարհում: Այս տարվա մեր ցուցահանդեսը մենք նվիրել ենք Հենրիկ Իգիթյանի ծննդյան 85-ամյակին: Եվ այս ցուցահանդեսը մեր երախտիքի խոսքն է նրան, մեր հարգանքն է առ նա:

Այսօր հպարտությամբ հայտարարում եմ նաեւ, որ մեր սաներից Ա. Գրիգորյանն իրավունք է ստացել այս տարվա սեպտեմբերին Այվազովսկու ծննդյան 200-ամյակի առթիվ կազմակերպվելիք ցուցահանդեսին իր աշխատանքը ներկայացնել: Սա մեծ պատիվ է թե կենտրոնի, թե Գորիսի համար: Շնորհավորենք նրան ու ցանկանք նոր հաջողություններ:

Ոգեւորված երեխաների աշխատանքներով, գեղագիտության ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն Լեւոն Իգիթյանն

Քաջիկ Միքայելյանի մասին.
հուշի պատառիկներ

Անցած դարի 60-ական թվականներից ի վեր դժվար թե առաջին անգամ Գորիս այցելող որեւէ նշանավոր անհատ, լիներ նա խորհրդային երկրից, թե արտասահմանից, առանց Ակսել Բակունցի տուն-թանգարան այցելելու մեկներ Գորիսից: Քաջիկ Միքայելյանը հանդիպում էր նրանց բոլորի հետ, ծանոթանում...

Քաջիկի՝ թանգարանում աշխատելու վերջին տարիներին ինքս էլ հաճախ էի լինում այնտեղ: Կարելի է ասել՝ արձակուրդս անց էի կացնում այնտեղ՝ հաճելին համատեղում օգտակարի հետ: Այդ օրերի ընթացքում, ինչպես ընդունված է ասել, ընկնում էի Քաջիկի ջրերը, կարդում, շփվում թանգարան այցելող հանրաճանաչ շատ անհատների հետ: Այդ օրերին մեկ անգամ եւս համոզվում էի, որ իմ ընկերն ու բարեկամն իր գործի անմնացորդ նվիրյալն է. թանգարանում էր օր ու գիշեր, նույնիսկ ոչ աշխատանքային օրերին:

Ահա այդպիսի ոչ աշխատանքային մի օր էլ Երեւանից զանգահարեցին՝ իմանալու, թե նա կարո՞ղ է բացառության կարգով (գիտեին, որ թանգարանն այդ օրը չպետք է աշխատեր) ընդունել Վահագն Հովնանյանին, ով բարեգործական նպատակներով գտնվում էր Արցախում եւ վերադարձի ճանապարհին ցանկանում է այցելել թանգարան: Քաջիկը, հասկանալի է, սիրով համաձայնեց: Երեկոյան կողմ թանգարանի մուտքի մոտ կանգ առավ մի շքեղ եւ շատ մեծ ամենագնաց ավտոմեքենա:

Քաջիկը դուրս եկավ հյուրերին դիմավորելու: Հովնանյանին ուղեկցում էին 3-4 երիտասարդ, հավանաբար՝ օգնականներ կամ թիկնապահներ: Քաջիկին բարեւեց ձեռքսեղմումով, հետո նույն ձեւով՝ նաեւ ինձ: Դարպասից ներս մտավ, մի քանի քայլ առաջացավ, կանգ առավ թանգարանի բակում, կանգնեց ոտքերը սովորականից մի քիչ լայն բացած դիրքով եւ սկսեց զննել շրջապատը: Նրա հայացքը հատկապես երկար կանգ առավ թանգարանի նորակառույց կցաշենքի վրա: Այն տպավորությունն էի ստացել, որ հյուրը եկել է ոչ թե թանգարանին ծանոթանալու, այլ այն գնելու համար: Վերջապես խախտեց լռությունը՝ սկսե՞նք:

Քաջիկը նրան ներս հրավիրեց:

Ընկերս տարերքի մեջ էր: Զգում էր, որ այցելուն լրջորեն հետաքրքրված է եւ համակ ուշադրությամբ լսում է իրեն: Մոտ մեկ ժամ հետո դուրս եկանք Բակունցների ճաշասենյակից: Քաջիկը Հովնանյանին ուղեկցեց դեպի ցուցասրահ, իսկ մնացածներս հավաքվեցինք Ակսել Բակունցին նվիրված խաչքարի մոտ: 10-15 րոպե հետո երեւացին նաեւ նրանք: Հյուրի՝ մինչ այդ ուրախ դեմքին նկատելի թախիծ կար:



Լուռ մոտեցավ խաչքարին՝ ձեռքով հպվեց նրան ու թեքվեց դեպի այգին տանող արահետը: Մեզանից ոչ ոք, կարծես ինչ-որ մեկի հրահանգով, չփորձեց տեղից շարժվել: Նրան հետեւում էինք միայն հայացքով: Հովնանյանը խորացավ այգու մեջ: Նկատեցինք, թե ինչպես կռացավ, բուռ ջուր վերցրեց այգում գտնվող աղբյուրի քարե գուռից, խմեց, հետո սկսեց շրջել այգում. մոտենում էր մեկ այս, մեկ այն ծառին, ձեռքը դնում նրա բնին, գլուխը բարձրացնում եւ նայում դեպի ծառի կատարը, կարծես փորձում էր աչքաչափով ծառի բարձրությունը որոշել: Որոշ ժամանակ անց դանդաղ քայլերով մոտեցավ մեզ: Արահետի վերջին տասը մետրի աջ ու ձախ կողմերին մարդաբոյ բացված վարդենիների ու հասմիկի թփեր էին: Մերթ ընդ մերթ թեքվում ու հոտ էր քաշում դրանցից: Ակնհայտորեն խնամված պարտեզայգին դուր էր եկել մեծահարգ հյուրին: Նրա դեմքը դարձյալ փայլում էր, իսկ զննող, փնտրող հայացքն անընդհատ պտտվում: Մի ակնթարթ այն կանգ առավ թթենու խեչակում դրված նարդու վրա: Դիմեց Քաջիկին.

- Նարդի՞ եք խաղում:

- Ես չէ, ընկերս է խաղում, - գլխով ցույց տվեց ինձ, - բայց «հենց այնպես» չի խաղում:

- Է, ճիշտ է վարվում, աշխարհում ոչ մի սպորտաձեւ առանց փողի չի լինում:

Դիմեց ինձ.

- Կխաղա՞ս ինձ հետ:

- Հաճույքով:

- Ինչի՞ վրա ենք խաղալու:

- Դուք հյուր եք, Ձեր ասածն օրենք է:

- Խաղա՞նք մի ուլի վրա…

Մինչ ես ցած կբերեի նարդին ու կդասավորեի խաղաքարերը, Քաջիկը քարե սեղանի աջ մասում քառածալ սփռոցի վրա դրեց թթի օղու երկարավիզ գրաֆինը, բակունցյան ժամանակների բաժակները, հարեւան Շալունց Սաքոյի տնից բերված թեժաթուխ լավաշը, մոթալի պանրի կռոճը, թփից նոր պոկված փշոտ վարունգը, դեռ ջրի կաթիլներն իրենց վրա պահող կանաչ սոխն ու համեմը:

Հյուրը մի հայացք նետեց ուտեստի վրա ու դիմեց ինձ.

- Բրազիլիայի նախագահի օրինակո՞վ կփորձես հաղթել ինձ:

Ես տարակուսած բարձրացրեցի ուսերս: Սպասել չտվեց, նստեց ու պատմեց…

1930-ին Բրազիլիայի նախագահը շախմատի աշխարհի չեմպիոն Խոսե Կապաբլանկային առաջարկում է իր երկրի երիտասարդ չեմպիոնի հետ մեկ պարտիա շախմատ խաղալ: Հաղթողին մեկ միլիոն դոլար հոնորար է նախատեսում: Բայց դա սովորական խաղ չի լինում: Շախմատի խաղաքարերն իրենց խաղային արժեքին համապատասխան տարողություններ են լինում՝ լցված ֆրանսիական կոնյակով: Տվյալ խաղի կանոններով հակառակորդի խաղաքարը վերցրած խաղացողը պարտավոր է լինում ըմպել խաղաքարի պարունակությունը, այնուհետեւ շարունակել խաղը: Բրազիլիայի երիտասարդ շախմատիստը խաղասկզբում հարվածի տակ է թողնում իր թագուհին, Կապաբլանկան վերցնում է

ասում է.

Տարիների ընթացքում համոզվել եմ՝ անտաղանդ հայ չկա, բոլորը տաղանդավոր են ծնվում: Եվ հարցն այստեղ սա է՝ տաղանդը դրսեւորելու համար ինչպիսի պայմաններ կան, մեր վերաբերմունքն է պետք այստեղ, այսինքն, մեզնից է կախված յուրաքանչյուր երեխայի ճակատագիրը: Մենք բոլորս պարտք ունենք մեր երեխաների հանդեպ: Իսկ պարտքը պետք է վերադարձնել, վերադարձնել՝ այսպիսի կենտրոնի տեսքով, այսպիսի ցուցահանդեսներ կազմակերպելով:

Ինձ համար երեք մեծագույն արժեք կա, երեք խորհրդանիշ՝ հայոց հողը, կանայք, երեխաները: Հողը հասկանալի է, իսկ կանայք են ծնում այս հողի պաշտպաններին: Եվ բոլորը, թե իշխանությունը, թե բանակը, այս երեք խորհրդանիշներին պետք է ծառայեն: Եվ հետաքրքիրն այն է, որ կենտրոնի սաներն այս երեք խորհրդանիշներն իրենց հոգու պրիզմայով են անցկացրել եւ նուրբ գույներով շաղախելով՝ դրանք այսօր որպես սուրբ մասունքներ վերադարձրել են մեզ՝ նկարների, քանդակների տեսքով: Եվ շնորհակալություն տեղական իշխանությանը, որ կենտրոնի կողքին է:

Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցին մնում էր շնորհավորել ցուցահանդեսի մասնակիցներին ու երեխաներին եւ ասել.

Ամեն նկար այստեղ պատմություն է: Այսինքն, այս նկարներն իմ, քո, նրա, բոլորիս պատմությունն է: Այս ցուցահանդեսը կենտրոն հաճախող երեխաների գիտելիքների մասին է խոսում: Եվ նրանք ամեն տարի ոգեշնչող հաջողությունների են հասնում: Մենք՝ մեծերս, պատրաստ ենք այս երեխաների համար ստեղծել լավ պայմաններ: Նրանց ու մեր բոլորիս ընտանիքներին ցանկանում եմ բարեկեցություն, երկրին՝ խաղաղություն, որ մեր երեխաներն անհոգ մեծանան ու երբեք պատերազմ չնկարեն:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կրթօջախի չորս փասնամյակը

Կապանի N2 երաժշտական դպրոցի 2016-17 ուստարվա հաշվետու համերգը նվիրված էր կրթօջախի հիմնադրման 40-ամյակին:

Գործունեությունը սկսելով չափազանց սուղ պայմաններով՝ դպրոցն աստիճանաբար վերափոխվեց եւ դարձավ դեռահասների գեղագիտական դաստիարակության օջախներից մեկը: Կրթօջախի կայացման գործում անուրանալի է հիմնադիր տնօրեն Լիաննա Հակոբյանի նվիրումը: 1989-ին դպրոցի տնօրենությունը ստանձնեց շնորհալի երաժիշտ ու դաշնակահար Վարդան Սարդարյանը: Իսկ 1996-ից մոտ երկու տասնամյակ դպրոցը ղեկավարեց ժողովրդական նվագարանների վարպետ, հմուտ երաժիշտ Վարդան Քոչարյանը: Այժմ N2 երաժշտական դպրոցը պատվով շարունակում է մանկան հոգում գեղեցիկի հանդեպ սերմանելու ուխտի ճամփա՝ Գայանե Հարությունյանի ղեկավարությամբ: Դպրոցը տվել է ավելի քան 950 շրջանավարտ, որոնցից շատերը դարձել են շնորհալի երաժիշտներ, հմուտ մանկավարժներ: Այսօր կրթօջախում դասավանդում է 23 մանկավարժ:

Մինչեւ հաշվետու համերգը սկսվելը դպրոցի տնօրենությունը պատվոգրի արժանացրեց դպրոցի հիմնադիր տնօրեն Լիաննա Հակոբյանին, Վարդան Սարդարյանին, Վարդան Քոչարյանին, ուսումնական գծով փոխտնօրեն Մայա Մելիքսեթյանին: Շնորհակալագրեր հանձնվեցին մի խումբ դասախոսների, հարգանքի տուրք մատուցվեց հանգուցյալ մանկավարժներ Լիլիթ Ավանեսյանի, Կարինե Խաչատրյանի, Թամար Հարությունյանի եւ Ռենա Աթաբեկովայի հիշատակին: Երախտագիտություն հայտնվեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին՝ միջազգային եւ հանրապետական մրցույթներին սաների մասնակցությանն աջակցելու համար:

Հաշվետու համերգն ընդգրկուն էր. կրթօջախի սաներն ու մանկավարժները տարբեր երաժշտական գործիքներով հնչեցրին հայ, ռուս եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայկական ժողովրդական երգեր: Համերգը եզրափակվեց կրթօջախի միացյալ երգչախմբի «Մուշ» ժողովրդական երգի կատարումով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Դպրոցների օպտիմալացման նպատակն ուսման որակի բարձրացումն է»

էջ 2

զի քաղաքային դպրոցներում օպտիմալացման խնդիր չկա, այսինքն՝ մենք նպատակահարմար չենք գտնում. թե նախարարությունը հետագայում ինչպիսի քայլեր կձեռնարկի, չեմ կարող ասել: Մարզի քաղաքներում մինչեւ 300 աշակերտ ունեցող չորս դպրոց ունենք, որոնցից մեկը՝ Սիսիանում, որ գալիք ուստարում կունենա համապատասխան թվով աշակերտ, մյուսը՝ Գորիսում, որը պարզապես նախատեսված է մինչեւ 300 աշակերտ ունենալու համար, բացի դրանից՝ հարեւան դպրոցից բավականաչափ հեռու է գտնվում, մեկը՝ Կապանում եւ մեկն էլ՝ Մեղրիում, որոնք նույնպես հարեւան դպրոցից հեռու են գտնվում:

– Օպտիմալացման մասին խոսակցություններին զուգահեռ հասարակության մեջ, իհարկե, ոչ փաստարկված, տարակուսանք առաջացավ, որ հավանական է Կապանի թիվ 7 հիմնական դպրոցը միանա Կապանի թիվ 6 հիմնական դպրոցին:

– Ինչպես ասացիք, դրանք չհիմնավորված զրույցներ են, նման խնդիր չկա: Կապանի թիվ 7 հիմնական դպրոցում շինարարական աշխատանքներն իրականացվում են Եվրասիական բանկի ֆինանսավորմամբ, ինչպես գիտեք, շենքը սեյսմավտանգ վիճակում էր, քանդման աշխատանքներն ավարտվել են, իսկ կառուցման աշխատանքների վերաբերյալ հստակ տեղեկություն չունեմ:

Օգտվելով առիթից՝ նշեմ, որ մարզի որոշ դպրոցներում այս ընթացքում իրականացվել են տարբեր շինարարական աշխատանքներ: Ավարտվել են Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոցի, Ագարակի միջնակարգ դպրոցի կցակառույցի վերանորոգման (հատկացված գումարի չափով) եւ կառուցման աշխատանքները, վերանորոգվել են Դաստակերտի եւ Տոլորսի դպրոցների տանիքները, 14 դպրոցի տրամադրվել է համակարգչային տեխնիկա, որոշ դպրոցների՝ գույք եւ այլն: Նախատեսվում են շինարարական աշխատանքներ իրականացնել նաեւ այլ դպրոցներում, բայց դրանց մասին՝ համապատասխան որոշում ստանալուց հետո:

– Քանի որ մոտենում է ուստարվա քննաշրջանը, մանրամասնեք այս տարվա քննությունների անցկացման փոփոխությունները:

– 2016-17 ուստարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների անցկացման մեջ բավականաչափ փոփոխություններ են կատարվել, ինչը, իմ կարծիքով, ողջունելի է: Գիտեք ինչ, հայկական դպրոցի տանիքի ներքո քննությունների ժամանակ նույնպես պիտի հնչի հայ խոսքը, գրվի հայ տառը: Մենք հասել էինք այն հանգրվան, որ քննություն էին հանձնում ինչ-որ «խաչեր» դնելով, ինչի արդյունքում լիարժեք չէին բացահայտվում աշակերտի լեզվամտածողությունը, վերլուծական միտքը…

Մասնավորապես 4-դ դասարանում նախկին թեստերի փոխարեն աշակերտի գիտելիքի ստուգումը կանցկացվի թելադրության («Մայրենի», հունիսի 1-ին) եւ գրավոր աշխատանքի միջոցով («Մաթեմատիկա», հունիսի 3-ին), 9-րդ դասարանում՝ «Հայոց լեզու եւ հայ գրականություն»՝ փոխադրություն (հունիսի 5-ին), «Գրականություն»՝ բանավոր (հունիսի 8-ին), «Մաթեմատիկա»՝ գրավոր (հունիսի 12-ին), «Օտար լեզու»՝ բանավոր (հունիսի 15-ին), «Բնագիտություն»՝ գրավոր (հունիսի 19-ին), «Հայոց պատմություն»՝ բանավոր (հունիսի 22-ին), «Ֆիզկուլտուրա»՝ ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ մինչեւ քննաշրջանի սկսելը, օրը որոշում է հաստատությունը:

12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ դեկտեմբերի 24-30-ը եւ/կամ հունիսի 1-24-ը: 12-րդ դասարանի աշակերտը դեկտեմբերին հանձնել է միայն այն առարկաներից պետական ավարտական քննությունները, որոնք չի ընտրել եւ չի ուսումնասիրել 2-րդ կիսամյակում:

Հունիսին միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություններ կարող է հանձնել միայն այն առարկաներից, որոնք չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: 12-րդ դասարանի պետական ավարտական հունիսյան քննությունները կկազմակերպվեն հետեւյալ կարգով՝ «Հայոց լեզու եւ հայ գրականություն»՝ գրավոր (հունիսի 7-ին), «Մաթեմատիկա»՝ գրավոր (հունիսի 14-ին), «Հայոց պատմություն»՝ գրավոր (հունիսի 21-ին): Չնայած նշեմ, որ աշակերտն ինքն է ընտրում, թե որ քննությունները հանձնի դեկտեմբերին, որը՝ հունիսին:

12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի դասապրոցեսը նույնպես այլ կերպ ընթացավ, ինչը նպատակ ունի աստիճանաբար վերացնել կրկնուսուցումը դպրոցներում: Արդյո՞ք կհասնենք նրան, որ դպրոցն աշակերտի բուհ ընդունվելու առաքելությունը լիարժեք կկատարի, թե ոչ, ցույց կտա ժամանակը:

– «Վերջին դաս» միջոցառման կազմակերպման համար երբեմն հանրապետական մամուլում հանդիպում ենք ծնողների բողոքներին ու դժգոհություններին: Մարզի դպրոցներից նման բողոք ստացե՞լ եք:

– Անուղղակի կարգով մեզ դիմել են նմանատիպ հարցով, եղել ենք այդ դպրոցում, պարզաբանումներ կատարել: Առհասարակ մշտապես կոչ ենք անում, որ այս միջոցառումն այնպես կազմակերպեն, որ հասարակության մեջ բողոքավորներ չլինեն: Ծնողական խորհուրդներին կոչ ենք արել չափավորության սահմաններում կազմակերպել միջոցառումները, իսկ տնօրեններին՝ թույլ չտալ անհարկի դժգոհությունների ալիքի բարձրացում:

– Ձեր շնորհավորական խոսքը «Վերջին դաս»-ի կապակցությամբ:

- Միշտ ասել եմ, որ «Վերջին դաս»-ը, որ իմ առաջարկությամբ դպրոցներում անց է կացվում հայ դպրոց-հայոց այբուբեն-հայկական մշակույթ-Հայ առաքելական եկեղեցի-հայոց բանակ-հայ զինվոր ձեւաչափով, նախեւառաջ հաշվետվություն է, որի ընթացքում պետք է ամփոփես դպրոցում անցած ճանապարհդ: Մաղթում եմ բոլորին հաջողություններ, եւ, ամենակարեւորը, նպատակասլացություն: Մեր աշակերտները խելացի են, բանիմաց, եւ, համոզված եմ, հետագայում նույնպես կունենան մեծ ձեռքբերումներ, կապրեն բարձր չափանիշներ ու արժեքներ դավանելով:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25 մայիսի 2017թ.

այն, ընպում մոտ կես լիտր կոնյակը եւ շուտով տանուլ տալիս խաղը:

Նրա պատմելու ընթացքում ես բաժակներն եմ լցնում, եւ երկուսիս համար էլ լավաշի մեջ պանիր ու կանաչի փաթաթում:

- Եթե կասկածում եք, կարող եք չխմել:

Նա ասածս անպատասխան է թողնում, փոխարենը բաժակ բարձրացնում.

- Դե ինչ, սպորտային հաջողություն մեզ, - եւ ընպում է:

Նկատելի էր, որ առաջին անգամ է նման օղի խմում:

Սկսում ենք խաղը: Ակնհայտ է, որ սկսնակ է: Հաղթում եմ մարսով: Թեքվում է դեպի իրեն ուղեկցող երիտասարդները.

- Տղաներ, ուլի երկու ոտքերը եկան:

Երկրորդ խաղն էլ եմ մարսով հաղթում:

Նորից թեքվում է դեպի ուղեկցողները եւ փորձում տեղից բարձրանալ.

- Ուլի չորս ոտքերն էլ եկան:

Կատակելու հերթը հասնում է ինձ.

- Պարոն Հովնանյան, մեր ուլերը հինգ ոտք ունեն:

Շարունակում ենք խաղալ: Այ քեզ բան, զառը երես է թեքում ինձնից, եւ ես պարտվում եմ: Շնորհավորում եմ նրան եւ տեղից բարձրանում: Ժամանակն է հոգս տեսնել: Նա կանխում է ինձ.

- Ես առանց Աննայի (կնոջ) այդ ուլին ձեռք չեմ մեկնի: Մենք այն պետք է վայելենք միասին: Միայն հիշիր, որ դու պարտք ես:

Ես նորից նստում եմ տեղս, իսկ նա շարունակում է վայելել պանիրն ու լավաշը: Հավանաբար աշխարհի հարյուրավոր լավագույն ռեստորանների համադամ ուտեստներ է համտեսել, բայց սփռոցի վրա ընկած լավաշի փշրանքներն այնպիսի զգուշությամբ է հավաքում, կարծես մանանա լինեին: Ակնհայտորեն այստեղ ամեն ինչ նրան դուր է եկել…

Հրաժեշտից առաջ Քաջիկը նրան մի շիշ թթի օղի է նվիրում: Օգնականներից մեկը փութով մոտենում է, ձեռքը մեկնում շիշը վերցնելու, բայց նա այն թեւի տակ է առնում, խուսափում դեպի իրեն մեկնած ձեռքից, ինչպես կվարվեր փոքր երեխան, երբ նրանից փորձում են վերցնել սիրած խաղալիքը, ավելացնելով.

- Ինձ են նվիրել:

Դուրս ենք գալիս տուն-թանգարանի դարպասից: Մուտքի մոտ մի քանի հետաքրքրասերներ էին հավաքվել: Բոլորիս հրաժեշտ է տալիս: Ձեռքը մեկնում է նաեւ Քաջիկը: Հովնանյանը միայն այստեղ է թեւատակի շիշը հանձնում օգնականին եւ գրկում Քաջիկին:

Ամառային երկար օրը մոտենում է ավարտին: Մայր մտնող արեւի շողերից ամպերը կարմիր էին հագել…

◈ ◈ ◈

Այս դեպքից մի քանի ամիս անց հեռուստատեսային մի հաղորդման ժամանակ էկրանին աչքովս ընկավ պարոն Հովնանյանի դեմքը: Եթե չլիներ գորիսյան մեր հանդիպումը, գուցե եւ ուշադրություն չդարձնեի: Հաղորդումը բարեգործական մի ընթրիքի մասին էր: Նման արարողություններին հարիր կահավորված դահլիճում մեր ազգի գործարար մարդկանց ընտրանին էր եւ պետության ղեկավարությունը՝ իրենց կանանց ու ամուսինների հետ: Ելույթ-բաժակաճառեր շատ եղան, որոնք ավարտվում էին մեր երկրի վաղվա օրվան, ապագային նվիրված բարեմաղթանքներով, երբեմն էլ՝ նվիրաբերվող գումարի չափի մասին երեկոն վարողի հայտարարությամբ: Խոսք ասելու հերթը Վահագն Հովնանյանինն է: Դահլիճի հասկանալի լռությունն առավել նկատելի է դառնում: Զգացվում է, որ դահլիճի գործարարների մեջ ինքն առաջիններից է: Նրա խոսքն էլ առանձնանում է իր բովանդակությամբ, որն առաջացնում է սեղանակիցների ակնհայտ զարմանքը:

«Առաջարկում եմ բաժակ բարձրացնել «Թամարա» պաղպաղակ արտադրող վարպետի եւ Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Քաջիկ Միքայելյանի համար: Ես պատիվ չեմ ունեցել ծանոթանալու առաջինի հետ, բայց ամեն օր վայելել եմ նրա պատրաստած անմահական պաղպաղակը, իսկ Քաջիկ Միքայելյանի հետ ծանոթացել եմ Գորիսում, տեսել նրա աշխատանքը: Եթե մեր հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացի իր գործին, աշխատանքին նվիրվի այնպես, ինչպես այս պարոնները, ապա մենք կարիք չենք ունենա նման բարեգործական ընթրիքների, իսկ կարճ ժամանակ անց մեր հայրենիքը կդառնա աշխարհի ամենաբարեկեցիկ, ամենաուժեղ երկրներից մեկը»:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

(Ըստ Մարատ Հարությունյանի պատմածի)

Ստոմատոլոգիական կոնֆերանս մարզկենտրոնում

Երկու տարի առաջ հանրապետությունում ստեղծվեց հայ ստոմատոլոգների միությունը, որն արդեն միավորում է մոտ 400 անդամի, ունի իր օրհներգը, 15 հոգուց բաղկացած վարչություն: Միությունը գիտագործնական գործունեություն է ծավալել, մասնավորապես, կոնֆերանսներ կազմակերպելով՝ ստոմատոլոգիայի առաջավոր փորձը ոլորտի մասնագետներին, ընդհանրապես մարզեր հասցնելու նպատակով: Աննախադեպ կոնֆերանս անցկացվեց Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում, որին մասնակցում էին ստոմատոլոգներ հանրապետության տարբեր տարածաշրջաններից եւ Արցախի Հանրապետությունից:

- Հայ ստոմատոլոգների միության վարչությունը սիրով արձագանքեց մեր առաջարկին՝ կոնֆերանսն անցկացնել Կապանում: Կարծում էինք, որ մասնակիցները մեր մարզից կլինեին, բայց նրանց աշխարհագրությունն ավելի քան ներկայացուցչական է՝ ընդհուպ մասնակիցներ կան Արցախից: Կոնֆերանսին ելույթ ունեցող մասնակիցները հանրապետության ճանաչված մասնագետներ են, եւ նրանց փորձն ու գիտելիքներն օգտակար կլինեն մարզերում աշխատող ստոմատոլոգներին: Ստոմատոլոգների միության վարչությունում ընտրեցինք այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, կարծում եմ՝ ներկաները բավականություն կստանան դրանց լուսաբանումից, կօգտագործեն գործնական աշխատանքում, - կոնֆերանսից առաջ «Սյունյաց երկրին» փոխանցեց ՀՍՄ վարչության անդամ Նաիրա Պետրոսյանը:

Կոնֆերանսի մասնակիցներին ողջունեցին հայ ստոմատոլոգների միության (ՀՍՄ) նախագահ Թորգոմ Դաշտոյանը, Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գեւորգյանը:

Կոնֆերանսում ընթերցված զեկուցումները վերաբերում էին ստոմատոլոգիայի նեղ ոլորտներին: Մարտիկ Հարություն-Քարամը, մասնավորապես, ներկայացրեց ատամնախողովակների մշակման, պրոզայիկ լեզվով ասած՝ ատամի նյարդի հեռացման տեխնոլոգիան, Կարեն Գաբրիելյանի զեկուցումը վերաբերում էր այն եղանակներին, թե ինչպես կարելի է որոշել կենտրոնական փոխհարաբերությունը եւ ինչպես այն փոխանցել հոդափոխանակիչի վրա: Թորգոմ Դաշտոյանն իր մեկնաբանումներով անդրադարձավ իմպլանտոլոգիայի աշխատանքային մեթոդիկային, մասնավորապես իմպլանտանտների եւ լնդային ձեւավորիչների տեղադրման տեխնիկային, իսկ Սերգո Հովհաննիսյանը՝ անշարժ պրոթեզավորմանը, նաեւ սխալներին եւ բարդություններին, որ հանդիպում են պրակտիկ ստոմատոլոգիայում:

Զեկուցումներն ուղեկցվում էին անհրաժեշտ մեկնաբանություններով, հարցուպատասխանի միջոցով պարզաբանվեցին ստոմատոլոգիայի նեղ ոլորտներին առնչվող խնդիրներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Նամակ «Ավրորա» մրցանակի դափնեկիր Թոմ Քաթինային

Ողջո՛ւյն բժիշկ Թոմ: Գտիր մի քանի րոպե ինձ համար: Գիտեմ, անհնարինն եմ խնդրում, բայց լսիր ինձ: Հուսով եմ՝ իմ խոստովանությունը մի պահ կթեթեւացնի քո այնքա՜ն ծանր բեռը:



Ես Սեւակն եմ Հայաստանի Սյունիք աշխարհից:

Սովորում եմ բժշկական համալսարանում. վիրաբույժ եմ դառնալու:

2015թ. ապրիլի 24-ին երեւանյան լեփ-լեցուն դահլիճում երկար որոնեցի քեզ, չգտա: Բայց գիտեմ, այստեղ ես:

Վերջապես խոսեցիր… էկրանից: Հոգնած,բայց կայծկլտուն քո աչքերն ասես ինձ էին նայում միայն, միայն ինձ ասում. «Ներիր, չեմ կարող բիբլիական քո աշխարհը գալ նույնիսկ մրցանակաբաշխության: Ներիր, իմ կյանքը իմը չէ, իմ օրը՝ եւս… ես այն մարդկանց եմ նվիրել… նրանք 750000-ն են, որոնց պետք եմ ինչպես օդն ու ջուրը: Իմ արշալույսները նման են մայրամուտի, ցերեկները՝ գիշերվա: Շաբաթվա յոթ օրերի բոլոր քսանչորս ժամերը նրանց կողքին եմ… դավաճանել չեմ կարող… »:

Ապա պատմեցիր Հարավային Սուդանի Նուբա լեռների տարածաշրջանի, նրա անպաշտպան ժողովրդի, ծավալվող անհավասար մարտերի մասին: Ամոթի ալիքը ողողեց ինձ, առաջին անգամ եմ լսում Նուբա անունը: «Շատերը չգիտեն «կուսական տարածք» այս շրջանի մասին: Այստեղ ցեղասպանություն է իրականացվում ժողովրդի նկատմամբ: Այստեղ փոքրիկ Սիրիա է: Օգնեք Նուբային: Ո՛չ ասեք ցեղասպանությանը… »: Իսկ կողքից շտապեցնում են քեզ՝ երկու բեռնատարով վիրավորներ են բերել…

- Ամենածանրերին վիրահատարան տարեք, - ասացիր ու վեր կացար, - կյանք է, - ավարտեցիր խոսքդ, ու հուրհրացին աչքերդ անզոր համառությամբ… Վերջին բառերդ հրդեհեցին դահլիճը /թող այն շանթ դառնա, հրկիզի մեր մոլորակի երկնակամարը, սառն ու անտարբեր մարդկային հոգիները…

Մի ողջ տարի իմ ուսուցիչն ու ուղեկիցը եղար քո թախծոտ, հուսավառ ժպիտով:

Եվ ահա այսօր նորից նույն դահլիճում քեզ եմ որոնում: Դու այստեղ ես, առաջին շարքում: «Ավրորա» մրցանակի հինգ հավակնորդներից մեկն ես: Դա նշանակում է, որ մարդիկ քեզ չեն մոռացել, դու նրանց հետ ես եղել մեկ տարի եւ ավելի: Եվ ես ուրախ եմ, որ արքուն է ու ազնիվ խիղճը մոլորակի, որն աշխարհահռչակ մեր հայրենակցի՝ Շառլ Ազնավուրի միջոցով մրցանակի հաղթողի դափնին շնորհեց քեզ, Բժիշկ Քաթինա: Դու մեկուսացել, զրկել ես քեզ աշխարհիկ բարիքներից եւ նվիրվել հիվանդներին: Քեզ երջանկություն եւ հրճվանք են բերում նրանց ջերմ վերաբերմունքը, շռայլ ժպիտը:

Չէ, մի սովորական հատուկ գոյական չէ քո անունը, այն խիղճ է, սեր է ու նվիրում…

Չէ, տարիների մի խմբաքանակ չէ քո կյանքը: Այն սխրանք է, խիզախում, արարում:

Դու ճիչն ես շղթայված արեւածագի: Եվ ես ուզում եմ, որ քեզ լսեն բոլո՜ր-բոլո՜ր…

Անհանգիստ է վերջին խոսքդ, լի՝ աճապարանքով: Հանգստացիր, բժիշկ Թոմ, այնտեղ՝ հեռավոր Նուբայի քո կլինիկայում, երեք հայ բժիշկ փոխարինում են քեզ: Տեսնո՞ւմ ես, էկրանից ողջունում են, շնորհավորում… Ռազմական բժիշկներ՝ փոխգնդապետ Գեւորգ Ոսկանյանը, մայոր Հայկ Հովհաննիսյանը /նա իմ մարզից է, մեր Սիսիան քաղաքից/, Սուդանում նրանց միացած գինեկոլոգ Արմինե Բարխուդարյանը /նա աշխատում է Քենիայի Մալինո քաղաքի հոսպիտալում/ առանց վարանելու մեկնեցին Նուբա…

- Մեկ շաբաթ է՝ այստեղ եմ: Սա իմ կյանքի ամենաանհավանական շաբաթն է, - շարունակում ես, - զգացողությունս այնպիսին է, ասես իմ տանն եմ: Շնորհակալություն, Հայաստան, շնորհակալություն «Ավրորա»:

Հավատքով լեցուն՝ ես հպարտությամբ շարունակելու եմ ծառայել աշխարհին եւ դարձնել այն ավելի լավը…

ՀԳ. Թող ների ինձ մեծն Հիպոկրատը: Ես քեզ եմ երդվում, բժիշկ Թոմ, կգամ կողքիդ լինելու, արճճից ծանր բեռդ թեթեւացնելու…

ՍԵՎԱԿ ՄԻՐԱԲՅԱՆ
Ք.Սիսիան
Երեւանի բժշկական համալսարանի 3-րդ կուրսի ուսանող

Արցախում վիրավորված զինծառայողը Հարժիս գյուղից է

Արցախում մայիսի 30-ին հակառակորդի կողմից արձակված կրակոցից հրազենային վիրավորում ստացած ժամկետային զինծառայող Ալիկ Սմբատի Ավանեսյանը Գորիսի տարածաշրջանի Հարժիս գյուղից է՝ շուրջ մեկ տարվա զինծառայող:

Զինվորի վիրավորվելու մասին մայիսի 30-ին հայտարարել է ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ, գնդապետ Կամավոր Խաչատրյանը:

Ըստ նրա՝ զինծառայողը ստացել է աջ ազդրի ստորին երրորդական միջանցիկ վիրավորում:

Վիրավոր զինվորը ներկայումս գտնվում է Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում. բժիշկները նրա վիճակը գնահատում են ծանր: Առայժմ զինվորին Երեւան տեղափոխելը հնարավոր չէ:

Ալիկ Ավանեսյանը մեկ անգամ արդեն վիրահատվել է, չի բացառվում, որ կվիրահատվի եւս մեկ անգամ:

Զինվորի համագյուղացիները, մերձավորներն ու հարազատներն ի խորոց սրտի աղոթում են առ Աստված, որ սիրելի Ալիկը հնարավորինս շուտ դուրս գա ծանր վիճակից…

«Սյունյաց երկիր»
31 մայիսի 2017թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Վաճառվում է Կապանի Աշոտավան թաղամասի N45 առանձնատունը: Այն երկհարկանի է, վերանորոգված: Առանձնատունն ունի տնամերձ հողատարածք: Մանրամասների համար զանգահարել 077422518 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Վաճառվում է Կապանի Նժդեհի 18 շենքի 36 Ա հասցեով առաջին հարկի 120 քառ. մ մակերեսով չորս սենյականոց բնակարանը (հարմար է խանութի կամ գրասենյակի համար), ինչպես նաեւ առանձնատուն Վերին Խոտանան գյուղում: Զանգահարել 077487777 հեռախոսահամարով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել Ռոման Գարենի Աթաջանյանի կողմից Արշակ Գառնիկի Սարգսյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին: **Բոլոր** այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Արշակ Գառնիկի Սարգսյանի (ծնված 1966թ-ին, հաշվառված ք.Կապան, Սպանդարյան 7/22 հասցեում) գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 3/2, հեռախոս (0285 5-29-59): Դատավոր՝ **Ա.Թումանյան**

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 07.06.2017թ.: